Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Ն Ե Ո
1271

1 9 99

# ԶՕՐՍ

# ՆԳԵՆԵԱ

## ՏԵՐԻՈՑ

ՑԱՅՏՆՕՂՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԳՈՐԾՈՑ ԵՒ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ.

Թարգմանութիւն

Ստեփաննոս քահանայի Սանդրինեանց.

1858

Ի ՏՓԽԻՍ.

ԼԵռ
1271

# ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՔ

## ՏԱՐՒՈՅ

ՅԱՅՏՆՈՂՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԳՈՐԾՈՑ ԵՒ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ·

Շարադրեաց

Ստեփանոս քահանայ Մանդինեանց 'ի Տփխիսայ·



1858

'Ի ՏՓԽԻՍ·

ի Տպարանի Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի ըն-
ծայեցելոյ յազնուական Գէորգայ Արծրունեայ·

ԼԵՕԻ ԳՐԱԴԱՐԱՆ

## ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ. 2 Августа. 1858 года.

Цензоръ Кайтмазовъ

3В 1274

41271-60

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

## ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՔ ՏԱՐՒՈՑ

*Յայտնողք Ռուսաստանեայն գործոց և նախախնամութեան·*

Մէկ ընդհանրական թագաւորութեան մէջ կային տասն երկու զօրավարք, ամէն մէկը ունէր 30 կամ 31 մարդ իրան ստորադրեալ, բայց իւրեանց մէջ չունենալով սէր և միաբանութիւն՝ միշտ իրար հետ կռվում էին, և այն աստիճան հասաւ սրանց խռովութիւնը, որ թագաւորութիւնը չորս բաժին արին, և ամէն մէկ բաժինն էլ չհաւատալով միմեանց՝ կարգեցին իրանց վրայ չորս գլխաւոր իշխաններ, որոց անուանքն էին· Ձմեռն, Գարուն, Ամառն և Աշուն:

Տասն երկու կառավարիչքը կարծում էին, թէ իրանց զօրքով հանգստութեան մէջ պէտք մնան չորս իշխանաց կառավարութեան ներքոյ, բայց ընդ հակառակն պատահեցաւ, որովհետև այն չորս իշխանքն միմեանց հետ հակառակ շարժելով մտքումն դրել էին միապետական իշխանութիւն հաստատել և իրանցից մէկն լինի ընդհանրական գլուխ, վասն որոյ իրար հետ միշտ կռվում էին, և միմեանցից յաղթվում սուտ դաշն հաստատեցին իրանց մէջ, որ ամէն մէկը երեք ամիս իշխէ ինքնագլուխ, բայց այս բանով մէկմէկու խաբում էին, ըստ որում առանց պատերազմի չէին հեռանում իշխանութենէն, երբ որ ժամանակն լրանալը մօտ էր:

Սրանց մէջ որովհետև ծեր իշխանն Ձմեռն էր, վասն
որոյ նա սկսաւ ամենից առաջ կառավարել Թագաւորու-
թիւնը։ Երկիրն իրան ծնողից հետ տեսնելով սրա ծե-
րութիւնն սպասում էր գտնել սրանից աւելի օգնու
քան թէ միւս երեքէն, որք երիտասարդներ էին, բա
յոյսը մնաց անկատար, որովհետև այս իշխանի մօ
երկիրն գնաց տեսութիւն անելու. մէկ ուրիշ կերպ
սաւ նրա դէմքն և զարհուրեցաւ, ինչ որ կարծում
այնպէս չէր, յոյսը կտրվեցաւ, երկու աչքը նոր բ
և սկսաւ մալէկ տալ, տեսաւ՝ որ գլխին մէկ հատ մազ
չկայր, միրուքէն սառուցի կտորտանք են կախուած հա-
գուստն էր մազեղէն և բրդեղէն, տան մէջը կրակն վա-
ռած, ոտներին տաք կօշիկ հագած, բերանէն սառը քա
մի էր փչում, ինչ բանի ձեռք էր տալիս սառոյց էր դառ-
նում. Թէպէտ տաք հագուստ ունէր, էլի կծկւում էր
ցրտէն, պառաւական շորերը ցխոտ, գտակն ձիւնով սպիտա
կացած, հրաման էր տալիս ամպերին, որ մարգարտանմա
անձրևի տեղ ձիւն Թափեն, հիւսիսին հրամայում էր
որ անողորմ հովի փոխանակ սառը քամիք փչէ, և այնչա
բարձրացան սրա անխղճմտանք գործքերը, որ քամին քա
քամի մարդիկ ճանապարհների վրայ խեղդւում էր, և քա
նիսի ձեռքն ու ոտքը ցրտահար էր անում, որք յետոյ
չինչ բանի պէտք չէին գալիս, և սրած փտտակներն ա
լիս էին բժշկի և դեղի։ Սրա ահեն ոչինչ ծաղիկ չ
համարձակւում գլուխ բարձրացնել, այլ հողի և ձնի նե
քոյ մնացին ծածկուած։

Այս իշխանն ունէր չորս դահիճ, Բուք, Ցուրտ
Ձիւն և Սառոյց, ուրեմն ով պիտի սպասէր այսպ
իշխանից գտնել դեղ ու ճար կամ լաւութիւն և
նութիւն.

Ցանկանալով իրան անխռով կյանքն առաջ տանել, բռնաւոր իշխանութիւնն տարածել բոլոր աշխարհքի -այ և լինել միահեծան Թագաւոր, սկսեց առաջ առաջ օգնականի հետ կռուել, որոյ անունն էր [illegible], ա տաքութիւնն քիչ քիչ պակասացնել. Յետոյ ի- ջրոս զօրապետների ձեռքով բոլոր աշխարհքի վայել- թիւնն կորեց, և ինչպէս այն ահագին լեռները, ո- րուխներն երկինքն էին հասած և իրանց սառցեղէն- օրէն երախտապարտ էին, և ուրախանում ինչպէս ա- ...ալ, սպիտակացրեց և ծերացրեց ձնով, իսկ դաշ- տերը, անտառները և այգիքը՝ որք ծաղիկներով լիքն էին անոյշ հոտով զմայլացնում էին և ուրախացնում ամէն ունիողների սիրտը, ձնով լցրեց և վայելչութիւնն զրկեց. ակ Նուքն մեռ կրծքն անխնայ փչելով իւր դառն շուն- ը չորացրեց ծառերին, որք իրանց կանաչ տերևներով ա- եգակի շոքէն պահպանում էին կենդանեացն և պտուղ- երով լցնում էին, երբ որ աշխարհքին դցեց իրան ձեռքի ներքոյ, սկսեց ապա մարդուն էլ նեղը լծել և ինչպէս, ողորմելի Ճանապարհորդն գալով իւր տուն յանկարծ դաժան Նուքն պատահում է Ճանապարհին, փչում է իւր սաստիկ քամին լեռների գլխէն, ձիւնը հաւաքելով ածում է Ճանապարհորդի գլխին և խեղդում. քանիսի ոտքն ու ձեռքն է փչացնում. քանիսն էլ լեռ- ների փէշերով անց կենալու ժամանակն սառույցը փլչ- ում է և սպանում, փողոցներն, անցուդարձի Ճանա- պարհներն ձնով ու ցեխով լցրած են՝ հիւանդութեան քա- մին փչելով մարդոյ բերանէն Թ.քի տեղ սառույց է վեր ընկնում դեմքի վրայ: Հարուստն թէպէտ մարդիկն է հագնում և տունն տաքացնում, բայց ցրտի Ճաշակելէն յետ չէ մնում, և միշտ գանգատվում է նորանից, իսկ ո-

պարտէզը անտանելը, աղքատը՝ որոյ երեսի գոյնն ցրտութենէն ծիրանացած, ոտքն բոբիկ, լախչկին ծակ, տան պատերն ծակծկած, որ պատճառաւ գտնուի այնտե ցուրտ քամին ծակում է, կտրտում է խեղճի երեսն. փայտ չունէ, անձող չունէ, ջերմութիւն փող չկայ, ջմլութն էլ այլուր, տղըմերին ձեռքերը կամ բերանին դրած փչելով կամ կծկըմտա մարդը այնտ պատին խուցած դուրս է գալիս տանիցն, որ մէկ երկու շահի աշխատէ ընտանեաց կառավարելու համար, իսկ գեղջկերը՝ տարին լնն ամիս աշխատելով նստել են Զմեռան իշխանութեան ժամանակը տան մէջ կրակի չորս կողմով, ձիւնը կոխել է դուռն և պատուհանն՝ վաստակածը նստած ուտում է, վաճառականները՝ որ մինչև այն ժամանակ ուրախութենով նոր էին նստում, և ծովի երեսին ման էին գալիս խնդալով, այժմ ամէնքն էլ մնացել են օտարութեան մէջ, վախենալով նաւ նստելէն, որ չը կործանվի, և իրանք ու իրանց բոլոր ունէլքն չքաշխշանան. բաց որում Բուք դահիճն փչելով ծովի մէջ խռովութիւն է գցել, ալէքները փրփրալով լեռների պէս են բարձրանում, և ինչպէս պղինձ կրակի վրայ եռ է գալի և տաղըն ցամաք ափներքին թրի պէս է խփում:

Այս իշխանի անգթութիւնը նոր նոր պատիժ ու պատուհաս է հնարում, գետերի երեսն սառուցով բըռնըվել է, իսկ աղբիւրների ջրերն սառել են. ադամեայի գեղեցին այս ցուրտ էլ է զինանում, բայց տաւարի և ոչխարի քաղցածութեանն ինչպէս համբերէ: Ձիւնը շատ, ցուրտը կատաղի, որ մարդոյ երեսը կրակի պէս այրում է և բուքը անտանելի, դարմանը վերջացած. ընկել է բոլիկ տաւար անասունի մէջ, և ծառերի փափուկ ճղները է կտրատում և տաւարին ուտցնում: Հարցրէք հիմիկ, թէ հերիք է գալիս թէ ոչ. շատերը տատկում են քաղ-

ցածութեններ, իսկ սղարմելը ոչխարների կէսն չէ մնում, և նրա ծնունդի մեծ մասն համարեա թէ ոչնչանում է։ Այս որոյ ձմրահատեալ գանգատ են անում Աստու-ծուն իւրեանց լաւ օրերն յիշելով։

Պեռ խեղճ եզներն լուծը ուսին
Բահ ու քըրտինքը երեսին
Մշակներն, ակօսներն
Ծերկիր յուսարտ կալ ու կասքեն։
Որ գծակ աչք երկրագործին
Նոր նոր ցանքով կշտացնեն
Այլ՝ թանգութիւն՝ սակաւութիւն
Շատ ամսոք անց կացնեն։
Ձմեռն էլ դեռ լեռան ուսին
Տընէր ձգնէր ի հող. հօտին,
Որ արածեն ու գիրանան,
Եւ տան մեզ բուրդ, միս ընդ կաթին։
Այգիք թէպէտ պաղից զրկուած
Անզգուակ մօր պէս մնացած,
Բայց դեռ զարդեր բնութեան տուած
Չէին դրել ամսոքէն բաց։
Խնդմնդալով դաշտք ծաղկէին,
Շողով շողով արծաթէին.
Մարգարտի պէս ցօղեր ալքեալք
Կակեձնաձնինչ ծածանէին։
Ձմեռ հեղ կծամն օրխորդաց
Մեղմ ծածանէր ՚ի փունջ ծաղկանց.
Մախակ ձայնեղ յոդն ձախորէր.
Այծեամն ՚ի մէջ ձնմեր մայրեաց.
Եաք ՚ի շուրջ ելեալ ծախոց
Մաքառէին ընդդէմ հովուց.

Օշահս խուրեանց թախել ցամաք
Զուէին թառուցեալ նման հաւուց:
Յայս ժամանակ բարեբախտիկ
Ճանեց Ճիւսիս իւր դիժ քամիք
Իբր 'ի բանտէն և կապանքէն՝
Յաջ ձախ եղև խառնաձիգ:
'Ի թարթ աչաց ծառք մերկեցան,
Տերևաթափ մերկեցան
Բեղութիւն և գեղ նոցա
Սաղվողակի չմնկեցան:
Օդն յղացաւ և շուտ ծնաւ
Անտանելի զանազան ցաւ.
Ցուրտ սառնաքոյ ել իւր կորդէ,
Պաղեալ, սառեալ, քար փոխեցաւ:
Դաշտագլին անձաւք, անտառք
Այրք և փապարք և առապարք,
Տատանեցան մայրք դարաւոր,
Եղապատառ են օդապարք:
Սունան, փրփրան ծովք նաւաբարձ,
Դիպին կոհակք ալեօք սնապարծ,
Ահորդք, անդորդք մահու միան,
Փրկութեան վան կարդան զԱստուած:
Նման այրի հարսին Նորե
Ամփոփեցեալ կայր արդարև.
Բատ շուարած իւր ուժի մէջ՝
Ճապա շաւանէր և մի սերև:
Նոյն ամէն գայ փորձութիւն այլ,
Յանկարծակի օդն այլայլեալ.
Ճողմք նենգութեամբ սեղէ տուէին,
Ներկնեց դրանք եղեն բացեալ:

Ձիւնն սկսաւ թափել բարդ բարդ.
Որպէս թէ է երկրի ինչ պարտ.
Ճերմակացոյց, կերպարանափոխեաց
Շէն ու անշէն հարթ ու անհարթ:
Յետ այսր Հիւսիս զինու ցրտոյ
Բուք 'ի ձեռ էն պարզէկ օդոյ
Բանեցր, անբանս անխտիր
Եհար շամփրեաց առանց գթոյ:
Լան, աշխարհն, կոծեն սգան,
Ամէն կողմից սարսափ զգան.
Շուրջանակի ափալ թափալ
Մաղեն լուսերք սրտակործան.
Ոմն զխաշինս իւր աւաղէ,
Այխակենդանս փարախէ.
Ոմն զմատաղ սանեկան իւր լայ,
Հոգալ, խորհալ, ձնձալ գաղէ:
Այլ ոմն լեալ ծայրակատար
Մատամբք ձեռաց և ոտից իւր.
Ծուխ փանդոյ հառաչանաց
Խոցեալ աչք արտասուաթոր.
Համայնք զհագուստ կրկնապատկեն
Մորթ և մուշտակս որոնեն.
Ծածկի կամկըն մախաղով.
Կօշիւոք ցրտոյ յերակս ազդեն.
Ողջու զօրեր այնիւ որթն՝
Որ հեւթ զմեր պարապէ պորտն,
Ձիւնածանակ, ձիւնածծեր
Հեծէ մաշէ զերկ մարթն:
Կոչէ և մարքին կան 'ի կարօտ
Պորել յերբեմն սպասարտ արօտ է

Մարգագետինք առ հասարակ
Գեղազգեաւ են անմառոտ.
Ջտան մեղ կաթն իւղ և զուարդ,
Ո՜ւշ մեր չքաւոր, քաղցն անյագուրդ.
Ո՜ւնչին այլոց կրողաց բեռն
Կաղցը պտղոց լըեալ է զորդ.
Մեղու, շերամն, որդան կարմիր
Ու այլ գործեն կարեաց մեր իր.
Փախեաւ ծիծառն պանդուխտ հիւրէկ
Ջերմիկ դառառ յիւր հայրենիք.
Ձեռն արևու կարճ է աւժմ
Բուսականաց անշուշտ մահ ա,
Ուրախութիւն չէք ՚ի միջի,
Ուր և հայիս վախ ու ահ ա:
Ո՞ւր են ծաղկունք մեր գեղանիշ,
Րնայշ վարդիկ, պարկեշտ մանիշ.
Ո՞ւր նոցայն թերթք գեղուզք զմայլէչք,
Ողորմ մեռան, ա՜հ կան աննիշ.
Տէր իմ, Տէր իմ ցե՞րբ այս աղէտք.
Ե՞րբ փշրեսցես Հիւսիսին նետք.
Ե՞ւ յիշատակքս դժոխատիպ
Ե՞րբ ՚ի միջոյ լիցին անհետք.
Մինչ այսդունակ հող և ծով
Տառապէին ընդ լծով
Ի յն ժանտաժուտ ձմերան
Հիւսիսածին մրրկով.
Հարաւ փակ դուռն իւր երայց,
Օ ջերմութեան հողմ շնչեաց.
Եկուլ գծիւն և զառն
Օ արթոյց զքնութիւն քնքած.

Ժոյժ յաւելաւ տկարաց.
Սատն իսկ օրհնել զՏէր կարաց՝
Գառնեակ գալստեան կարապետ
Մանիշակաւ աւետեաց.
Գոհանամ, Տէր՝ գոհանամ
Այսօր, յեգուց, յամէն ամ.
Քոց անքննին խորհրդոց
Ծունր դնեմ փառս տամ.
Համբերութիւն իմ յաւել
Տանել չարեաց առաւել,
Սիրտս արա քեզ տաճար,
Օրհնել անդուլ և գովել.

Այսչափ անիրաւ գործքը չմնաց Ձմեռն իշխանին. և ահա՛ միաս յանկարծ գալ իշխանին արդարութեան և աշխարհի երջանկութեան, որոյ անունն էր Գարուն, երիտասարդ զուարթ, քաջառողջ, բարձրահասակ, հարուստ, դիւցազն, ուժեղ. կերպարանքն գեղեցիկ, աչքերն ծով ծով, ունքերն կամարակապ, ճակատն լայն ու սպիտակ, շրթունքն բարակ, ատամներն մարգարտաշար, շլինքն ինչպէս մարմարիոնեայ սիւն, հայեցուածքն քաղցր և ժպիտն դէմքի վրայ նկարուած, երեսն կաթնով լուացեալ, մատներն ինչպէս թափած սպիտակ մեղրամոմ, թշերն կարմիր նռան պէս, գլխին ունէր դրած ծաղիկներից հիւսած թագ, հանդերձն կանաչ, փչում էր անոյշ հոտ և զմայլեցնում էր մարդու քիմքը. Գալու ժամանակն երկիրը փխանդակ փռեց նորա ոտքի տակն գոյն գոյն ծաղիկներ, թռչունքներն քաղցր եղանակով շնորհաւորում էին նորա գալուստը, գառներն ուրախութենէն մայում էին և վեր վեր էին թռչտում նորա առաջ. Այսպիսի հանդիսով նրա-

տաւ իրան աթոռը, որ ամէն գեղեցիկ տեսակ ծաղիկներից հիւսած էր, և պալատը զանազան քաղցրախօս թըռչունքներով լիքն էր, ծաղկեայ ածուներով զարդարված

Իշխան Ձմեռն խնդալով Գարունք իշխանի մըտնելը այսպիսի մեծ հանդիսով, որ բոլոր աշխարհքն ուրախութենով առաջ գնայ ընդունելու, առաւելի բարկացաւ, և ժողովեց իրան զօրքը կռիւ տալու նրա հետ, բայց երբ իմացաւ թէ կառավարիչ Մարտն ապստամբել է իրանից՝ շատ նեղացաւ, վասն որոյ ծածուկ քննութիւն արաւ, տեսաւ որ ութ ամսինք նրա զօրքերը իրան հնազանդութեան մէջ են, միւքը ինչ յոյս ունեցաւ՝ որ յաղթութիւնն իրան կողմէն լինի, և սկսաւ պատրաստութիւն տեսնել պատերազմ բանալու, յուսալով միւս արարածներին սակայն ամէնքն էլ ապստամբեցան։

Մարտի 9 ին բաց էլաւ ահագին պատերազմը։

Սար ու ձոր թնդում էին. քամիների ձայնը օդը լցնում էր երկիրը դղրդում էր, երկինքն որոտում էր, ջրերը սկսան ուռչել և սառոյցներին կոտրատել ու ջարդջրդել, որոց ձայնէն անտառները թնդում էին և երկու կողմէն էլ կոտորածք էր լինում։

Այս դառուց գոչումը խնդալով Արեգակն՝ մտիկ տուաւ երկնքից, և տեսաւ իրան հին ծանօթը որ աշխարհքը ստեղծուելու չորրորդ օրէն 'ի միասին բնակվում էին մէկ գնդի մէջ և միշտ բարեկամ էին, ուրախացաւ շատ, և որովհետև ինքն էլ շատ էր նեղացած Ձմեռն իշխանէն՝ իրան զօրութիւնը պակասացնելոյ համար, վասն որոյ ժամանակ գտաւ իւր վրէժը հանելու Գարուն իշխանի օգնականութեամբ, ուստի այնուհետ սկսաւ, լուսոյ երեսը կաւթնով, հազաւ թագաւորական ծիրանի շորերը, զարդարված գլխէ գլուխ անգնահատելոյ քարերով, որ մտել

չէր կարողանում մօտիկ գալ, և եթէ մէկը համարձակ-վում էր աչքերը պտտցնել նորա դէմ, կասես թէ ամ-պերից փշեր էր ցցում աչքերի մէջ և ծակծակում, դուրս էկաւ պալատէն, մօտ էր գալի նաղութիւնով ամ-պերի վրայ, և ամպերը ոսկու նման էին փայլում, ծի-ծաղում էր, խնդում էր Գօրուն իշխանի վրայ, բարևում էր նորան, գրկում էր, համբուրում էր, փռում էր իւր շողքը աշխարհքի երեսին, իսկ Ձմեռան վրայ կրակ էր թափում, հրամայում էր ամպերին որ իրան հետ 'ի միասին կռուելու պատրաստուին:

Իշխան Ձմեռն տեսնելով այս ամենայն պատրաս-տութիւնը իրան դէմ, մարդ ուղարկեց Գօրուն իշխա-նի մօտ այս պատգամով, թէ՝ Գօրուն, մանուկ իշխան, դու դեռ երեխայ ես, ես քո հասակից խնդրում եմ, Եկ յետ դարձիր քո տեղդ, և ափսոս է քո արեդ, որ խաւարացնեմ, իմ հասակս ծերացել է կռուի մէջ, բո-լոր աշխարհքըն ինձ չկարողացաւ դէմ կանգնել, 'ի սկըզ-բանէ աշխարհի հազարաւոր տարեկան լեռներ, գետեր, անտառներ իմ հրամանիս դէմ չկարացին կանգնել, այլ ամենքն էլ հնազանդվեցան, և եթէ դու Արեգակին ես յուսացել՝ թէ նա իրան ջերմութենով քեզ պէտք օգ-նական լինի, սակայն ես նորա տաքութիւնը կոտրել եմ, և զեանի տակն եմ դցել, և այժմ էլ կը հրամայեմ ցրտին և հիւսիսին, որ սաստիկ սառը քամիք փչեն, և նորա էլած տաքութիւնն էլ սառեցնեն, իսկ եթէ դու քո երիտասարդութեան խելքին կըհետևիս՝ կը հրամայեմ բքին, որ ձնի տակն խեղդէ քեզ, ուրեմն յետ դնա քո տեղդ, որ իմ ծերութեան ժամանակս չտեսնեմ քո ա-պարդութիւնդ.

Գօրուն իշխանն լսելով այս պատգամն՝ ամենևին

չքաւորացաւ, այլ իւր պատրաստութեան վրայ էր, և պատասխան ուղարկեց, թէ բոլոր աշխարհքն քեզանից անշնորհակալ է, 'ի սպառնալեաց քոյ ես ոչինչ երկիւղ չունիմ, եթէ քո իշխանութիւնդ երկարի աշխարհքիս փոխման կերպս, ծեր մարդիկ միշտ ինքնահաւան, բարկացող և անգութ կը լինին, աստի լաւ կը լինի որ խաղաղութեամբ հեռանաս քան որում ծերութիւնդ միայն կամենում եմ պատուել, և օրհնութիւնդ ժառանգել, իսկ թէ ոչ, պատրաստ եմ պատերազմելու քեզ հետ։

Արեգակն սկսաւ քիչ քիչ ջերմութին աւելացնել, ամպե՞ երբեմն անձրև և երբեմն ձիւն էին անում, քամին սկսաւ փոքր առք փչել և լեռների ու դաշտերի ձիւները հալել. տեսաւ Ձմեռն թէ իւր գործքը վատ է գնում, կրկին դեսպան ուղարկեց Գարունքի մօտ, որ խաղաղութեամբ մընան, ու 'ի միասին կառավարեն աշխարհքը, և իրան արդարացնելու և իրաւունքը հաստատելու համար այս խօսքը ասպարեց, „Ով Գարուն իշխան, քո ժամանակին էլ է վատ եղանակ լինում, անձրև է գալի, ցեխ է լինում, մարդիկը նեղանում են. ծառերին դուն էլ պակաս վնաս չես տալի կարկտով, ես չունիմ մեղք, եթէ երկիրն և բնակիչներն ինձանից անշնորհակալ են, ես իմ պարտքս վճարել եմ առաջուց իմաց տալով իմ գալս։ Ո՞րթէ իմ իշխանութեան ժամանակին երկրագործներն ու պարտիզպաններն անգործ պիտի մնան, թէ ձիւն ու ձմեռն է, ահա ամէն քաղաքումը արհեստաւորներն իրանց գործն են անում, բայց երկրագործներն ու պարտիզպաններն ծուլանում են, ահա Դեկտեմբեր զօրապետի ժամանակումն թէպէտ օրերը շատ կարճ են և ցուրտն ու սառուցը աւելեք կը լինին երկրագործին, բայց դուրսի գործքի տեղն, տնական գործքեր կարեն շինել,

և հարկաւոր է կենդանեաց հողը քաշել, ոտքերի տակըն շատ դարման փռել, որչափ կարելի է տաք ու չոր պահել ախոռը, բայց այն եզների ախոռն, որ բոլոր ձըմեռն պիտի բանեցնեն չէ պէտք շատ տաք պահել։ Ծընելու կովերի վրայ մեծ հոգս ունենալ, ոչխարի ծնելու ժամանակը որչափ որ մօտանայ, այնչափ աւելի լաւ կերակուր տալ։ Հաւանոցները երբ ձիւնով ու սառուցով կը ծածկվին, պէտք է ներսը ծածկած ամանով տաք ջուր դնել, որ ցրտէն չը կոտորվին։

Երկրագործը քաղցր օդի ժամանակը պիտի մտիկ տայ որ արտերի հողի մէջ լճի ցեխ ու կաւ խառնէ, չոր ու մամուռ պատած հողերի վրայ փաշէ դարձած կիր փռելու է, կաւոտ հողերը վարել, փոսերն ու ջրանցքները բացանել, և աշխատի մտիկ տալու, որ ջրերը մէկ կողմի վրայ լիճ չդառնան։

Ձիթապտուղները այս ամսի մէջ քաղելու է. որովհետև թէ որ մինչև գարունը ծառի վրայ մնան, ձէթը լաւ չի լինի։

Ծաղիկ պահօղն պիտի մտիկ տայ, որ բոյսերը ցըրտէն պահպանէ, և թէ ջուր պէտք լինի տալու՝ տաք օրերումը տայ։

Յունվար զօրապետս ժամանակն հրամայեցի, որ երկրագործներն պատրաստեն մշակութեան գործիքները, թէ որ ժամանակը ձեռք տայ, կարող են կակուղ հողը փորել, ցանքերը դրստել, թուփերը կտրտել, ու մամուռները հանելու ժամանակն այս է, նմանապէս ճղքների վրայ թրթուրների բունը հիմի պիտի քանդեն, ջարդեն, որ գարունքին չշատանան։

Ծաղիկ մեծացնող պարտէզպանն պիտի մտիկ տայ, որ փակարաններէ մէջ բոյսերը չը սառեն, նրա համար

ժամանակ ժամանակ հարկաւոր է կրակ վառել, ու դրսի ցրտութեանը համեմատ տաքութիւնը աւելցնել։ Իսկ փետրվար գործադրելու ժամանակը արեւը սկսում է բարձրանալ, ու օդը տաքանալ, բայց շատ անգամ դեռնի երեսը ձիւն ծածկած կը լինի։ Թէեւ որ բաց տեղը աշխատելու ժամանակ լինի, պէտք է դուրս ու դարնան ցորեն ցանելու հողերն վարել։

Պարտիզպանն էլ պէտք է, որ շուտ հասնող սերմ ցանէ, հողը վարելէն յետոյ հարաւային կողմի եղած պատերի տակը ցանելու է ոլոռն (գխլուլ) բակլայ, սոխ, սխտոր, պրաս ու կաղամբ, գետնախնձոր տնկել, հողի կոշտը լաւ մաքրելու է։ Պատրաստ անելու ծառերն հիմկուց կտրելու է եւ ամէն տեսակ բոյս կարելի է տնկել, մանաւանդ թաց հողի մէջ։ Բայց մարդիկ ձիւն ու ցուրտ եկաւ տեսնելով, մնան տները ու վառեցին դռները։ Ես ինչ մեղաւոր եմ, որովհետեւ չէ առաջին անգամ պատահած, որ անսովոր լինէին, ահա Մնաւ Իշխանը, որոյ ժամանակը ամենայն բարութեամբ լիքն է, ձայն է տալիս թէ ՚ի ... այսինքն տարեկանդ սա, տարուայ պատրաստութիւնդ տես, ըստ որում Զմեռն առաջդ է, բայց նրանք դանդաղում են, օրէց օր են դցում, մինչեւ որ ձիւնը կոխում է դռները, եւ յետոյ տրտնջում են ինձանից, ես ինչ անեմ, որ շատերն խուլ լինին ու չիմանան։ Այսպիսի անհոգութեամբ եւ դանդաղկոտութեամբ գռեհիկ մարդկանցից ձարակուր եղայ, կամեցայ կախ բաց անել նրանց հետ, աւելցնելով ցրտութիւնը եւ ցեխը, ուստի ուղարկեցի Մարտ զօրավարին, որ հնազանդեցնէ նրանց եւ ստիպցնէ պատրաստել իր ժամանակին տարեկան պաշարը, հաց, փայտ եւայլն, բայց Սա ութ օր է որ գնացել է եւ այս օր պատասխանել է ին-

ձանից ու քո կողմն է անցել ․ Բայց դու իշխան Գա-
րուն, գիտացի՛ր, որ էդ զօրապետ Մարտը, որ կռիւ է
նշանակում, քեզ էլ հաւատարիմ չի լինի, և շատ ա-
նիրաւութիւններ կանէ, քեզանից էլ կ'ապստամբվի, եթէ
խելք ունիս և իմ բարեկամութիւնն կ'ուզես, բռնի՛ր դը-
րան և կռներն կապած ուղարկի՛ր ինձ մօտ։

Գարուն իշխանն ամենևին ականջ չդրեց այս պատ-
գամիս, այլ պատասխան տուաւ քաջարտութեամբ․ Թէ
մեք երկուքս 'ի միասին իշխանութիւն անել չենք կարող․
կամ խաղաղութեամբ գնա դուրս և կամ պատերազմ․
իսկ Մարտի համար որ ասում ես թէ քեզանից ապըս-
տամբել է, միտքդ բե՛ր, որ Դեկտեմբեր զօրապետին Աշուն
իշխանիէն ապստամբեցրիր, և քո կողմդ դցեցիր, ուրեմն
մի՛ նեղանար այդ բանի համար․ Թէ Մարտն իմ կողմն է
անցել, որովհետև ցանածդ հնձում ես։

Այս դեսպանութիւնն ոչինչ քար չարաւ մէկին կամ
միւսին, երկուսն էլ աչքը բռնել էին մենակ իշխելու
վրայ, բաց էլաւ արիւնահեղ պատերազմ։ Արեգակն իրան
տաքութենով փախցրուց ցրտին և հալեցրուց ձիւնը, բաց-
վեցան լեռների գլուխներն և փեշերքն․ ցամաքեցաւ ցեխը․
հալվեցան ջրերի սառուցներն և ձորերի ու դաշտերի մէջ
առուները խոխոջալով ու քարերի հետ ծափ տալով գը-
նում էին․ ամենայն բնութիւն ստացաւ իւր Աստուածա-
տուր կենդանութիւնն, և եթէ Ձմեռվան զօրքերը մէկ քա-
նիսը մնացած կային՝ ամպերը վերևից գոռգոռալով, կայ-
ծակներ թափելով փախցրին, և անձրև ածելով մաքրե-
ցին բոլոր աշխարհքը, և այն բռնաւոր իշխանութիւնը
վերջացրին, քանի որ իրանց իշխանութիւնն հաստատ էր։

Յանկարծ բաց արի աչքս տեսայ նոր բան, նոր աշ-
խարհք, նոր կեանք, նոր ուրախութիւն, բաց արի պա-

տուհաններին, բայց այն դռներն, որ մինչև էն ժամանակը փակած էին, որ բերանի հով չը մտնի, առայ ձեռս գաւազան և գնացի դէպ 'ի անտառն և տեսայ հեռուանց մէկ երիտասարդ քսան կամ քսան և հինգ տարեկան բոլորովին անծանօթ՝ յանկարծ վախեցայ, չը լինի թէ դահիճ բուքն լինի, բայց երբ մօտ կացայ նկատեցի նորա գեղեցիկ կերպարանքը, ուրախացաւ սիրտս, ձեռքին ունէր փունջ փունջ կապած ծաղիկներ, որ դեռ կոկոնի մէջ էին, և պլպլուն կանաչներով զարդարած:

Այս անծանօթ երիտասարդը պատահեցաւ ինձ անտառումն, ինչտեղ պատուական և քաղցրահամ աղբիւրների ջրերը վազելով քարերի վրայ, արծաթի նման էին երևում, հոգիս փառաւորվում էր, կեանքս զուարճանում էր, աչքերիս լոյսը աւելնում էր, ձմռվայ շունչը բոլորովին կտրվել էր, համարեա թէ հետքը չէր երևում, կանաչ խոտը փոքր ինչ մեծացել էր ու գետնի երեսը մախմուր էր շինել, գառները ծաղկոտ տեղերումն արածում էին, մայում էին, ես էլ կանգնած մտիկ էի տալիս, հովուն կանաչ թփերի վրայ թինկը տուած թութակ էր անում, նորա քաղցր ձայնին ականջ դնելով զմայլում էի, նստեցայ մէկ աղբիւրի մօտ, այս տեղ էր գեղեցիկ տեսարանը. Աստուծոյ արարչագործութեան երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ օրերի մէկ մասն աչքիս առաջևն էի տեսանում և միացածն էլ նկարագրում էի, երկիրն բոլոր բանջարները բուսցրել էր, պտղատու և անպտուղ ծառերն կանաչած, պտղի աչքը տուել էին, ծաղկների կոկոններն դուրս էին եկել, արեգակն նոր էր զորթել քնէն և առաւօտէն դուրս գալով աստղերի կամարի վրայ ճեմելով և ջահենման ճառագայթը սփռելով անտառի ծառերի գլխին, տերևների վրայ նստած գիշեր-

վան ցօղը մարգարտէ հատիկների պէս փայլում էին, հով ու զով քամին մէկ կողմից հանդարտ փչելով տերևներին խշխշացնելով ցօղը մարգարտի պէս թափվում էր գետնի կանաչ մախմուրի վրայ, թռչունքներն նստած ծառերի ճղքներքին և թփերի գլխին անոյշ երգելով՝ զմայլեցնում էին սիրտս՝ որ անցկացած ժամուայ նեղութիւնն ամենևին միտքս չէր գալի, անասունների արօտ անելը աստուածա-պատրաստ նրանց համար կերակուր խոտերի և ծաղիկների. միտքս առ Աստուած էր փոխվում, և ես որպէս մարդ-տեղծուած վեցերորդ օրումը, տեսնելով այս ամէն ըն-թացքը, զարթում էր միտքս, սիրտս և հոգիս փառա-ւորել Աստուծոյ ամենակարող զօրութիւնը և սքանչելիքը և միտք անել, թէ նա է որ տալիս է զօրութիւն և շունչ ամենայն արարածոյ. Նա է՝ որ պահպանում է ա-մենին ժամուայ ցրտի և բքի ձեռից, վասն որոյ կանգնե-լով աղբիւրի մօտ, բաց արի գլուխս, տարածեցի ձեռքս դէպի երկինքը, փառաւորեցի զԱստուած ասելով.

Ո՜վ իմ Արարիչ քեզ ի՞նչ ընծայեմ.
Ինչ կայք որ ունիմ բոլորն էլ քոյ են.
Այս առաւօտս քեզնից ի՞նչ խնդրեմ.
Մաքուր սիրտ հոգի տալ ինձ աղաչեմ.
Ես անարժան եմ չկարեմ խօսիլ.
Ամենակալդ գործքերը պատմել.
Ո՜վ են մեղաւորքն որ համարձակվին
Մեղաւոր բերնով Քո Անունդ կոչեն.
Բայց Դու ասացիր դարձարու՛ք առ իս,
Ես դառնամ առ քեզ և դու դա՛րձ առ իս.
Մաքրեա իմ հոգի, սիրտ, միտք և մարմին.
Որ փառաւորել Քեզ կարող լինին։

Լեզուիս թո՛ղ խօսիլ այս առաւօտին,
Պատմել Քո սուրբ գործքդ և սքանչելին,
Կանգնած եմ ահա՛ այս սառն աղբիւրին.
Ականջ եմ դնում թռչնոց ձայներին։
Զարթի՛ր ո՛վ աշխարհ, զարթի՛ր աղաչեմ,
Զարթի՛ր, մի՛ քնիր, քեզ նոր բան պատմեմ,
Զարթի՛ր, տե՛ս ի՛նչ են գործք քո Արարչին.
Զարթի՛ր ու լաւ տես Նորատուր բարին։
Անցկացաւ ձմեռն, անցկացաւ ցուրտ, բուք,
Անցկացաւ սրտից անմխիթար սուգ.
Երկիրը անշէն, արդ շէն է դարձել.
Լեռներ, անտառներ ու դաշտեր ծաղկել.
Եկաւ մեզ հասաւ Իշխանն Գարուն.
Բերաւ իրան հետ ծաղիկներ սիրուն.
Ծառերին տուաւ ոգի, կեանք, արիւն.
Ծաղկով, խոտերով, լցրեց դաշտերուն.
Առաւօտ էլաւ, արեգակ ծագեց,
Մեծ Ճառագայթիւ աշխարհք փայլեցրեց
Աստուծոյ մերոյ գործքերը բացեց.
Արարածներին հոգւով ցնծացրեց։
Բոլոր աշխարհքն ահա խնդում է,
Թռչուն, անասուն, գազան ցնծում է,
Անշունչ արարածն հետ միանում է.
Աստուծոյ անունն փառաւորում է.
Քամին քաղցրաշունչ հիմիկ է փչում.
Ակնի պէս ջրերը լեռներից վազում.
Ծառերը իրար այժմ են ողջունում.
Թռչուններն զԱստուած են փառաւորում.
Տե՛ս թէ երկիրն ի՛նչպէս ցնծացաւ,
Երբ Գարունն եկաւ, նա մանուկ դարձաւ.

Ծափ ծափի տալով որդւոցն է կանչում․
Աստուծուն օրհնել է հրաւիրում․
Մեծ են գործք քո Տէր, խոր են խորհուրդք քո.
Անչափ պարգևես բարութիւնդ մարդոյ,
Անձրև, արեգակն անխնայ ես շնորհում․
Բարւոյ և չարի ածում և ծագում․
Արարածներին մօտիկ եմ տալիս,
Քո կարողութիւնդ յայտնի երևին.
Ասում եմ փառք Քեզ անմահ Թագաւոր
Կամ պարգևացդ անթիւ, բիւրաւոր.

Այս աղօթքից յետոյ ծունր դրի երեք անգամ աղբիւրի մօտ, ականջ էի դնում թռչունների խօսելուն, Սրտիցն աղաղակած, արեգական ջերմութեան, օդի պարզութեան, քաղցրաշունչ քամուն, ծառերի կանաչելուն և ծաղկանց երևելուն արժանի եմ եղել, 'ի հարկէ սիրտս ուրախ երկար եմ նստում այս տեղ. յանկարծ տեսայ այն անծանօթ երիտասարդին, որ առաջ տեսել էի, հանդարտ ման գալով դէպի ինձ է գալիս. Ես շուտ վեր թռայ տեղիցս՝ կամենում էի առաջ գնալ, բայց նա չեթող. և ինքն մօտացաւ. Ա՞խ ինչ եմ տեսնում, կ՚ասես թէ բոլոր կանաչեղէնաց հոտը նրա փեշերքէցն էր փչում. շուրերն բոլոր կանաչ էին, բռնեցի ձեռքը և հարցրի անունն, պատասխանեց, « իմ, անունս է, Ապրիլ, և եմ Գարուն իշխանի երկրորդ զօրապետը. Բայց դու մօտիկ տուր այն մարդուն, որ ծեր առաջն գնում է 22 հոգւով ու քթոնիքը կոխել է, արևնով ներկվել է, քամին, որտուամը, և կայծակներն նրան օգնում են, և ձըմռան հետ կռիւ է տալիս, յաղթել է և հալածում է նրան, և ես ետևից գնալով օգնում եմ, բժշկում եմ,

Նրա վերատուրված գործերն, կամ ինչ ծառեր, բուսեր և անկե ձմռան ցուրտը դիպել են՝ ես առողջացնում եմ։

Այն կռիւ տուող զօրապետի անունն է Մարտ, բայց մի՛ ասիր, թէ կռիւ է նշանակում, չէ՛, չէ՛, նա մեր կողմն է, նա աշխարհի փրկողն է Ձմռայ ձեռքից, նա է սկիզբն և հիմք դնողն երկրի բարեզարդութեան և վայելչութեան, Նրա կառավարչութեան ժամանակը ձմռան իշխանութիւնը վերջանում է, օրերն սկսում են երկարել, արևը տաքնալ, գետնի երեսի ձիւնը հալել, բոյսերը ծլել ու ծաղկել։ Բաց է լինում երկրագործների և պարտիզպանների նոր ուրախութեան աշխատանաց ասպարէզները, մինչև հիմայ որ ձնի և ցրտութեան երկիւղէն տան մէջ նստած էին կրակի չորս կողմանը, հիմիկ աշխատութեան դռներն բացուել են, ժամանակ է երկիրը փորելու, ցորեն ու գարնան կանեփը ցանելու, արտերը տափան անելու, եթէ չէ բուսած ցորենը, մարգերին հողը վարելու, վազերը էտելու, ծառերի չորացած ճղեռները կտրելու, ամէն տեսակ պտղատու ծառեր տնկելու, ծառերը պատուաստելու, մատղաշ վազնի արմատի տակի հողն փորելու, ու կակղացնելու, սիսեռն. ոսպ, բակլայ, դդում, գազար, վարունգ, լոբի, սեխ, սոխ, սխտոր և այլն ցանելու, նմանապէս բժշկական խոտեր, կանաչեղէն և աղցաններ և այլն։

Ապա հարցրի թէ ի՞նչ է քո պաշտօնը, պատասխանեց, իմ պաշտօնս է բժշկութիւն, ինչպէս անունս էլ ցոյց է տալիս՝ մտիկ տալ անասունների, ծառերի, ծաղիկների, դաշտերի և անտառների առողջութեան վերայ, պաշտպանել և ազատել այն ահագին ձմռայ ցրտի կոտորածէն, զուարթացնում եմ ընդհանուր արարածներին, և երկրագործների համար նոր նոր աշխատանք.

ներ կ՚բացուի. իմ օրումս պէտքէ արտերի միջէ դէշ խոտերը քաղել, ջուր ընկած տեղերին մալկ տալ և չէ պէտք թողուլ, որ ձիաներն ու կովերն նրանց մէջ արածին: Կարող են ցանել սերմօրէնք էլ՝ ինչ որ Մարտի մէջ ցանել են, պտղատու ծառերի կորիզները թաղելու է, քանի որ մկներն չեն շատացել՝ սրանք ծլին: Իմ վերջին օրերումը վազն ու թութը պատրուսելու է. Փեթակներն կարգաւորելու է. Ձմեռվան մէջ մնացած կանեփը մախրաջրումը դնելու է, հաւերին, բադերին թուխս նստեցնելու է, տաւարներին ու ձիաներին ախոռից հանելու ու չվարած արտերի մէջ թողնելու է արածելու.

Ծաղիկ մեծացնողները, թէ որ ուրիշ տեսակ ծաղիկների սերմեր ունին պիտի ցանեն, վարդերի և ուրիշ բոյսերի վրայ եկած որդունքը ջարդեն, որ չ՚շատանան.

Այս ասելով կտրեց խօսքը, և տուաւ ինձ մնաս բարեաւ, թէպէտ շատ էր ցանկանում խօսել հետս բայց ներողութիւն խնդրեց, ըստ որում մէկ րոպէ էր մնացել նրա ժամանակին, և յանկարծ թռաւ՝ էլ չտեսայ.

Այժմ մնայ խորին մտածմանց մէջ, թէ նա ինչպիսի քաղցր և անուշ էակ էր, որ երևեցաւ ինձ, և ո՞րպիսի քաղցր խօսակցութիւն էր, որ նրանից լսում էի, ո՞վ Աստուած, անքննելի են գործքդ, փառաւորեալ է քո սուրբ Անունդ, ինչով կարող եմ վճարել քո երախտիքդ, ունեցածս քո են, կեանքս քո շնորհածն է, միայն կըմնայ ինձ փառք տալ քեզ, և բացի սրանից ոչինչ բանի ինձանից չես կարօտում: Այս մտածմունքից յետոյ ոտքս առաջ դրի դէպի տուն գնալու, երբ որ հասայ դաշտի գլուխը, ինչտեղ մէկ կաթնահամ աղբիւր կար և առաջեր քարէ աւազան, որի ջուրը խշխշալի թափվում էր աւազանի մէջ, և աւազանից դուրս գալով ջը-

բռնում էր դաշտը, փոքր ինչ հանգիստ առայ կէնտեղ, և յանկարծ տեսայ մօտս կանգնած մէկ երիտասարդ բարձրահասակ, գլխօք զուարթ, երեսն կաթնով լուացած, մազերն խուճուճ և ոսկեթել, գլխին ունէր ծաղիկներից թոլորած պսակ, երկու ձեռքին փունջ փունջ կապած ծաղիկներ բացուած, հագուստն զանազան տեսակ ծաղիկներից գործուած և կարած, հոտն եդեմական էր, արեգակն նրա վրայ խնդում էր, թռչակներն և ուրիշ տեսակ երգող թռչունքներն չորս կողմանը պատած հետը ման էին գալիս, ծառայում էին և երգում էին: Այն աղբիւրի մօտ, որ մենք կանգնած էինք, ցանած արտեր կային, հերկերն ողջոյն էին տալիս այն հրեշտակակերպ անձին, ոչխարներն և կովերն արածում էին նրա չորս կողմանը, հովիւներն, կանայքն կովկիթները ձեռքին խաղալով, պար գալով, գնում էին դէպի նրանց, և մաքիքն, կովերն բոլոր լինելով տուր էին տալիս ծծերի պտուկները կթելու, կաթնի կթելու ձայնը առուի խոխոջելու ձայն էր հանում, շուտ շուտ դարդակում էին կովկիթները պատրաստած ամանների մէջ, մածուն էին մերում, ապա ածելով խնոցի մէջ և հարելով՝ հանում էին կարագ և թան, և միւս կողմից էլ պանիր էին շինում: Գեղեցիկ տեսարան, որ ամենայն արարած ստեղծուած է մարդուն ծառայելու համար, մարդուն կերակրելու համար, ուրեմն ի՞նչով կարող են վճարել այս պարտքը, եթէ ոչ գոհանալով Արարչէն, մեզ համար այսչափ բարութիւն պատրաստողէն: Այս ուշադրութեամբ զննում էի այս ամէն բանն, նրան երանի էի տալիս մտքիս մէջ, տեսնելով այն փառքումը, որովհետև բացի այնչափ վայելչութիւնէն, որ նա ունէր, անմեղութիւնն, խոնարհութիւնն, հեզութիւնն, քաղցրութիւնն, մարդասիրութիւնն, մէկ

խօսքով ամենայն առաքինութիւնքն նկարուած էին նորա հրեշտականման դէմքի վրայ, քանի նայում էի՝ չէի կըշտանում. աչքերս պլլացած մնին էի տալիս, ուզում էի խօսել, բայց չէի կարում, և երկար ժամանակ մնացի լուռ, նրա երեսի պատկառանքն արգելեց ինձ խօսելու, նկատեց նա որ կամենում եմ խօսել, բայց լեզուս կապուել է, սկսաւ առաջ առաջ ինքն խօսել զուարթ ձայնով, ձայնը լսելուն պէս սթափվեցայ ինչպէս քնից նոր զարթած, կարծեցի թէ երկնքիցն էր ձայն գալիս, ձգեց ձեռքն դէպի ինձ, մատներիցը ծաղիկներ էին թափում, վարդ, մանուշակ, նարգիզ, մեխակ, համասփիւռ, նռնոփար ևայլն. և սկսաւ խօսել այսպէս " Ի՞նչ ես լուռ կացել օ՛վ եղբայր, ես էլ քեզ նման արարած եմ. Սորա երկու երեք խօսքը աւելի թմրեցրուց ինձ և ուրեմն բան չկարողացայ ասել, միայն հարցրի " Ի՞նչ է անունդ և օ՞վ ես, " պատասխանեց առաւ ժպտալով պտուղներէ տալը, իմ անունս է Մայիս և կը նշանակէ Մա իմ, այսինքըն այս ամենայն բարութիւնքն, որ Աստուած ինձ պարգևել է՝ իմս է, բայց ես ինձ համար ամենևին չեմ պէտք անում, այլ ընդհանուր աշխարհին եմ տալի. իմ պաշտօնս է բոլոր ծառերին, բոյսերին և անդերին զարդարել, աճեցնել և պտղաբեր անել, ես իմ Արարչի հրամանն կատարելով մարդոյ համար, փառաւորուած եմ այս օրինակ, ինչպէս տեսնում ես, որովհետև հրամանին հնազանդ եմ. բայց մարդիկ՝ իմ աշխատանքս ոչնչացնում են, և չեն կարողանում լիք վայելել իմ տուած բարութիւնքն հրամանաւ Արարչին. պատճառն որ ձեր ընդդէմ Աստուծոյ արած գործքերն, ձեր յանցանքն, ձեր մեղքն այս ամէն բարութիւններից զրկում են ձեզ, ահա բաց արա աչքերդ և տես թէ դաշտերն, լեռներն և ձո-

րերն, ի՞նչպէս ամենայն բարութիւններով լի են, և դուք ուրախանում էք, ասելով՝ թէ այս տարի ամենայն պտուղն էլ առատ է, և փոխանակ առաքինութիւն գործելոյ՝ որ առատ տան պտուղներն, սկսում էք չարութիւնների և մոլութիւնների հետևել, այն ժամանակն գետինը սուգ է անում՝ որ ձեր մեղքի համար Աստուած նրա արդիւնքն է կտրում կարկտով, մորեխով, ժանկով, թրթուրով և ուրիշ ուրիշ հարուածներով. երբ որ այս պատիժներն գալիս են, այն ժամանակը նոր խելքի էք գալիս, և Աստուծոյ փէշն էք բռնում: Ի՞նչ անէ Սայեան երբ մարդկանց մէջ սառնութիւն է, ի՞նչ անէ Գարունը, երբ ձեր մէջ սիրոյ ձմեռն է:

Ահա իմ օրերումս որդն շերամ (ապրշումի ճիճուն) սկսում է քնից զարթնուլ, և ուտելով թթան տերևները ապրշում շինել ձեր հագուստի համար: Մեղրաճանճը ծաղիկներ է հաւաքում մեղր շինելու համար, ոչխարները և կովերը արածելով իւր ժամանակէն բուսած պտղական կանաչ խոտերը և անուշահոտ ծաղկունքը, կաթը աւելացնում են և շինում են քնտեր կարագ, պանիր, մածուն, սեր և թան: Խօսելու ժամանակը բերանէն լոյս էր բղխում, ճշմարիտ՝ որ շատ ներգործեցին սրտիս այս խօսքերը, և ընկայ խորին մտածմանց մէջ, քունս տարաւ, յանկարծ բացի աչքս և ո՛չ ոք չտեսայ, զղջացայ, բայց անօգուտ, ըստ որում ժամանակը անցել էր, բայց մէկ միտք եկաւ ինձ, թէ Աստուած իւր ամենակարող զօրութիւնը և անքննախուզմանութիւնը կամենում է ցոյց տալ ինձ արարածներով: Ուրախ սրտով կանգնեցայ տեղէցս, աչքերս ուղղեցի դէպի արարածները և ասացի այս երգը:

Ո՜վ Գարուն Գարուն. իմ սիրուն Գարուն,
գարո՛ւն առաջ գամ՝ բարով քո տարուն.
տարիդ մնայ անմահ յիշատակ բարուն,
բարի հայր ՙՆոյից սկսեալ դարուն։
Երկինքն է պայծառ մայլէ կապուտագոյն,
կապուտ ամպք ցած գան խաղան հետ ծովուն
ծովէց ջուր առնուն տանել երկինքում.
երկնքից ցօղել վերայ դաշտերուն։
Արևն պայծառ հագել ծիրանի,
ծիրանի հագած արքայի նմանի.
աննման է սա ամպի վրայ բազմի,
բազմի յասկեղահ անձեռատարծի։
Երկրի երեսին փռեց իւր շողը,
շողովը ջնջեց ձմռվան դողը,
դողի հետ ցուրտը, սառն ու բուքը,
բէկ ազատեց աշխարհի սուգը :
Ձիւնը հալվեցաւ բացուեցան լեռներ,
լեռներ ցնծում են, դաշտեր ու ձորեր.
ձորերին ձայն տայ, դաշտերին կանչէ,
կանչէ, մի՛ ննջէք ահա՛ կանաչներ։
Զարթէ՛ք ծաղիկներ եկաւ ձեզ Գարուն,
գարուն յարուցիչ ՚ի ձմռան մահուն,
մահն անց կացաւ, հասաւ ձեզ կեանքն,
կեանք է ձեզ տալի մեծ գարնան ժամքն։
Զարթէ՛ք մի՛ ննջէք աշխարհ ծաղկեցրէք
ծաղի՛կ զանազան հոտից բուսուցէ՛ք,
բուսուցէ՛ք ժամ է դաշտ ու ձորերում,
ձորեր ու լեռներ կանաչով լցրէ՛ք։
Ինչու չը դիպչի՛ք ծերացեալ Մասին,
Մասիս սիրելի, ՙՆոյեան տապանին.

տապանին օրօրոց մարդկային ազգին.
ազգին դեռ տակէ եօթն հազար ամբին:
Նա էլաւ մինակ զոհ անխիղճ ձեռան.
ձիւնից, սառուցից մնաց անապատ,
ազատեց աշխարհ.ք ինչպէս մայր գթոտ,
գթոյն էր զոհեց Արկուռին սիրուն:
Սովլկաւածու լեռներ, վէնք չար իշխանին,
իշխանին ձեռուն ծառայ ահագին.
ահագին սառուց ունէ իւր գլխին,
գլխին մեծ վայ է այն առղ անկյանըլին:
Բա՛ց է Ճանապարհն, բա՛ց է մի՛ վախէք,
մի՛ վախէք ելէք Ճանապարհ ընկէք.
ընկէք Ճանապարհ ընդ ցամաք և ծով
ծովերն են խաղաղ անվնաս նաւով:
Բայց փառք Աստուծոյ հիմիկ բան չկայ,
կայ արձակ ճամբայ մէջ որ անց կենայ
անց կենալին էլ մի՛կ փաս չի տայ.
այս ճամբայ բարօվ իւր տունն գնայ:
Օ՛, օրհնէք մեզ գետեր, աղբիւրք, և առուք,
առուք մի՛ վախէք, եկաւ ձեր օրեր.
օրեր բաղձաւոր շատ ունէք հիւրեր.
հիւրեր աղջկունք, և սիրուն հարսներ:
Նաժն ունին դրած մանուկ բերանին.
բերանին .քթկալ, ականջին Ճանկատին.
Ճանկատից լաչակն ծածկել երեսին
երեսն ինչպէս վարդ կարմիր երկին:
Նստում են մօտդ մէլ աղբիւր աղբիւր,
աղբիւր խօսում են հազար բիւրաւոր,
բիւրաւոր բայէ անյմտմէն քեզ մօտ,
մօտ ես չես լսում վնաս դաշտ ու ձոր:

Աշխատող ձեռք, որք քու մէջդ են լուանում,
լուանալով երեսը փառք տան Աստուծուն,
Աստուծուն երես մէկ խաչ են հանում,
հանած կուժն ուսին տուն են յետ դառնում.

Քաղաքից հարսներ գնում են այգին,
այգեքն կանանչ մախմուր երեսին.
երեսին աչքին դուրանես ու սիրուն:
սիրուն աղջկունք 'ի մէջ թփերուն.

Գարունը բացվեց նրանց սաքն էլ բացվեց,
բացվեց այգերուն դռներ ճանապարհ,
ճանապարհ կանանչ փարդերով լցուած,
լցուած բլբուլով վարդերին նստած.

Զարթէ՛ք գեղականք եկաւ ձեզ Գարուն,
գարուն սիրելի հանդ ու արտերուն,
արտերուն կանաչն գնացէք նայեցէ՛ք.
նայեցէ՛ք ջրեցէ՛ք անհոգ մի՛ թողնէք.

Զարթի՛ր այգեպան ձեռքդ առ բահը,
բահէ մարգերը էլ չկայ ահը,
ահն անցաւ ցրտի, ժամ է ցանելու,
ցանք արա հերիք, որ ունենաս շահը.

Զարթէ՛ք ո՛վ հովիւք եկաւ ձեզ Գարուն.
գարուն կանաչէց սար ու ձորերուն
ձորեր ու դաշտեր հետ ծաղիկներուն
ծաղիկ, խոտ պատրաստ կայ ոչխարներուն.

Ա՛խ ինչ տեսարան է մէջ անտառին
անտառն կանանչ ջրերն փայլին.
փայլին, խոխաջեն, գլգլին, կարկաչեն,
կարկաչեն դնան, գետերն թափին:

Թռչունքներ ծառին նստած երգումեն,
երգով բարձրաձայն զԱստուած օրհնումեն,

օրհնութիւն անկէտ բերանովը անբան,
անբան արարածք անձանն ընծայումն են։
Մեծ են գործք քո Տէր մեծ և յաւիտեան,
յաւիտեան օրհնեսցէ Անունդ արարչին,
սուրբ ես Արարիչ ստեղծող մեր և կեանք,
կեանք մեզ պարգևէ Քեզ միշտ հնազանդ կանք։

Այս ասելով ճանապարհս ուղղեցի դէպի տուն, երբ աչքերս մտն'ի մտածելով մոլիկ էի տալիս աշխարհքի երեսին յանկարծ քրտունքս կոխեց և զգացի տօթ, բայց արի շորի կոճակները, որ փոքր ինչ հովանամ, և տեսայ հարաւային կողմից գալիս է մի հսկայ մարդ ամենևին անծանօթ, աչքերի կրակի պէս փայլում, մազերն շէկ, դէմքն դեղլցիկ գոյնն կարմրաւուն, շունչն տաք, հագած ունէր մի սակ շոր, գլխին ունէր մէկ կողով պտուղներով լիքը, խնձոր, տանձ, դեղձ, թուզ, կեռաս բալի) նուշ. խաղող և այլ տեսակ մրգեղէններ, շալակին ունէր ցորենի և գարւոյ խուրձեր, ձեռքը ինչ բանի տալիս էր, շուտով գոյնը փոխելով դեղնում էր. Արեգակն իւր ջերմութիւնն շատ էր աւելցրել, համարեա թէ տանե-պահելիկ անելի, քան որ առաջ պատահեցի, տօթը ժամէ ժամ սաստկանում էր. այն անծանօթ մարդոյ բերանը պապակում էր, պտտում էր շուրջ տեղ և սառը ջրեր, որ կարողանայ ծարաւը զովացնել, բայց գետերը, աղբիւրները, առուները փախչում էին նրանից, որովհետև նրա մօտ գնալը ժամանակը ցամաքում էին։ Զովացընում էր պաշները թթուաշ ջրալից պտուղներով, ձմերուկով, խնձորով և այլն որք նրա չորս կողմը լիքն էին։

Գարուն խաղաղաւէր իշխանը առաջ գնաց իւրան զօրքով հրչհարելու նրա գալուստը, և յանձնեց նրան

իշխանական գահը, որ հիւսած էր ծղնօտից և չորս կող-մը տեսակ տեսակ պտուղներ քաշ ընկած: Պալատը սաս-տիկ տաք էր, արեգական ջերմութիւնը տաքացրել էր գետնին կրակի պէս, օդումը հով ու զով չկայր, սակայն գարունն խոստացաւ, որ տասն օրեան ժամանակը այս ցող, հով և անձրև: Իսկ նոր իշխանն խոստացաւ, որ քանի իշխանութիւն ունի գարնան յիշատակին պահէ, ծաղիկ-ներով, ծառերի զարդարութեամբ և կանաչութեամբ: Այս խոստացութենից յետոյ բարևեցին միմեանց և Գարունն թռաւ արծուէ պէս բարձրացաւ, էլ չերևեցաւ:

Նա ականջ էր դնում սրանց խօսելուն, և յետոյ մօտ գնացի նոր եկած իշխանին հարցրի անունն և ասաց իմ անունն է ,,Ամառն,, որ երկու նշանակութիւն ու-նի՝ առաջինն Ամ առն, այսինքն տարին պտղաբերողն է, և երկրորդ Ամ առ, այսինքն տարեկան պաշար առ, որ ձմեռան ժամանակին չմնաս աղքատելի, սոված ու անկեր:

Լսեցի յանկարծ խաղի ձայներ. շուռ եկայ, տե-սայ մեծ բազմութիւն մարդկանց որ եկել էին ու բոլո-րը շնորհաւորելու նորա գալուստն, այգեպաններն կողովներով մրգեղէն էին բերում, գեղականքը մանգաղներն ձեռ-ներին արտերն էին հնձում և խուրձ խուրձ կապելով բերում էին նորան, ոչխարներէ բառաչելու ձայնը սա-րաները լցնում էր, հովիւներն սրինգները ձեռքին բու-դըն էին խաղում: Մեծ ուրախութիւն էր այս տեսա-րանը, տօթը և շոգը մոռացայ, արեգակի ջերմութեան զօրութիւնը նոր իմացայ, որ նա է կեանք տուողը ամե-նայն տնկոց բուսոց և կենդանեաց, և մարդոյ տարեկան ապրուստ տուողը նա է: Ուրեմն ինչքան պէտք շնորհա-կալ լինինք այն գլխաւոր անմարմին և աներևոյթ [illegible], որ այսչափ բարութիւնքը մեզ համար պատրաստում է

տներան և անշունչ արարածների ձեռքով.

Հարցրի կրկին՝ թէ ի՞նչ է քո պաշտօնը, պատասխանեց իմ պաշտօնս է հասցնել պտուղները և երկրի բոյսերը, լցնել ընդհանուր աշխարհը բարութեամբ պատրաստել մարդոյ համար տարեկան ապրուստը: Այսկայն ինչքան որ ես աշխատում եմ մարդոյ համար, այնքան նրանք յետ են փախչում, ինչքան որ ես հնազանդ եմ իմ Արարչին, այնքան մարդը անհնազանդ է գտնվում, և պատճառ են լինում զրկվելու ոչ միայն այդքան պատրաստած բարութեններից, այլ և կեանքից: Իմ բնակարանն է Արեգական ամպը, և մինչ եմ տալիս աշխարհքի երեսին, ոչինչ աչք չտեսանէ իմ տեսածն: Շատերը անիրաւական այդպէս բարութեամբք, ճանապարհի վրայ կանգնած ապականութիւն են անում, կողոպտում են. սպանում իրանց ընկերներին տանից հանելու, ողորմելի ճանապարհորդն ահ ու դողով է մահ գալի. Շատերը զանազան անառակութիւնք գործելով շարժում են Աստուածային բարկութիւնը: Արեգակն զուարճացնում է իր ջերմութիւնը, կրակ է թափում աշխարհի վրայ, կրակէ հետ կարկուտ, հեղեղներ, որք պտուղներուն փթացնում են. խուրձերը թաց լինելով ծլում են և ոչնչանում, այրում է խոտին և ողորմելի անասունները մնալով առանց կերակուրի՝ սոված կոտորվում են: Այս պատիժների հետ յանկարծ օդը սկսում է խառնվել, պարզութիւնը կորչնում է, շոգն կոխում է, որ արև պայծառ լոյսը բռնըվում է, և յանկարծ զանազան զարհուրելի նշաններ ենք տեսնում. և ո՞րն են, ով, տեսակ տեսակ հիւանդութիւնք, ցաւեր, ժանտախտ, խոլեր, ծաղիկ, կարմրուկ և այլն և այլն, իսկ չերմ ու տենդերն հաշիւ չկայ, և ի՞նչ է հետևում, շատերը քուչերում, ճանապարհներում յան-

կարծ ընկնում են , սեւանում ինչպէս երկաթ, փոխում են, լուծում են, փորն ու սիրտը կտրտում է , բերանը ջերմութենից պապակում է, դեղերն ջուր են դառնում, ոչինչ չեն օգնում. այս ժամանակումը բանակաւն ոչխարները փախչում են սառն ու տեղից սարը ձորն ապաւինելով, որ պատուհասից ազատ մնան , իսկ հովիւներն էլ նրանց հետ ցիր ու ցան են լինում։ Այնուհետև այն ուրախ քաղաքները և տեղերը սուգ ու շիվանի մէջը են նըստում, լսվում է խաղի ձայնը, ծիծաղ դժուար ես տեսնում մարդու երեսին։ Ողորմելի անմեղ երեխայքը , որը ծաղկով , որը կարմրուկով, որն բկացաւով են պառկած, կորատվում են ծնողաց աչքերը, արտասուքը աղբիւրի պէս են թափվում աչքերից, քանի որ տեսնում են զաւակներին այն դրութեան մէջ.

Սրանց պատճառով երկիրն էլ է պատժվում, լաց է լինում նա էլ իր որդւոց ոչնչանալու վրայ . փուշն կամ ժանգը կոխում է խաղողին, չորչորացնում է, ուտում է, փչացնում է, և զրկում է մարդուն նրա ուրախութենից, խոտը չորացած, աղած ու մաղած, գետնի վրայ ոչինչ չէ երևում, գետինը ճաքճքած, կարծես թէ անդունդք պիտի բաց անէ, ողորմելի անասուններն թէ ոչխար, թէ տաւար, թէ ձի և թէ ուրիշ արածող կենդանիք սուգ են անում սովածութենից, տեսնելով անժամանակ մահը իրանց աչքի առաջևը կանգնած, բարձրացնում են գլուխները դէպ ի երկինքը , բառաչում են, խնդրում են երկնքից կերակուր, բայց չեն գտնում. ողորմելիքը թէ մարդու անիրաւութեան համար են պատժվում նըրանք էլ, իսկ իմ աշխատանքս՝ որ այնչափ բարութիւնն պատրաստել եմ նրանց համար, բոլորովին ունայն է անց-

կենում. ամէնքն փախած սար ու ձորեր, արտերին հնձող չկայ, հնձածին կապող և ժողովող, ծառի պտուղները հաւաքող, ամէնն էլ անտէր մնացել են, հասկը թափվում է գետնի վրայ և լինում թռչունների կերակուր, պտուղներն ծառերի վրայ են փթում, իսկ սեխենոցը (բոստանները) անասունների ոտքի տակն են փչանում:

Նոր խելքները գլուխն է գալիս տեսնելով այնչափ վնասներն և իրանց անձանց պատժվելն յԱստուծոյ, մտնում են աղօթք և մատաղների ձեռք տալ, բռնել Աստուծոյ փէշը և աղաչել, որ այս պատիժներից ազատէ, և Աստուած տեսնելով նրանց գոռոց գոչյը՝ իրան մարդասիրութեամբն ողորմում է և ազատում.

Այս խօսքերը շատ մեծ ներգործութիւն ունեցաւ սրտիս և հոգւոյս մէջ, գտեցի, որ ճշմարիտ էր ասածներն. զգացի, որ այն պատիժներն՝ մեր անառակութեանց համար է, որ Աստուծոյ ճանապարհից մեր րոպէական հեշտութեան համար դուրս ենք գալիս, համեմատեցի այն խօսքերը մեր արարմունքի հետ և չորսից մէկը չէր ասածները. Ամօթից գլուխս քաշ գցեցի և գնացի իմ ճանապարհը, բոլոր ոսկորներս դողում էին, երեսիս գոյնը թռչում էր, անձնս փշաքաղում, աչքերիցս արեան արտասուք էր վազում, պռօշներս և ատամներս իրար էին դիպչում, ոտներս թլանում, քանի միտս էր գալի այն գըրոյցը, ինչպէս որ էլայ հասայ գեղի գլուխը, տեսայ որ կալ էին կապում, մէկ մարդ կայր կալերի գլխին, բարձրահասակ, աչքերը փայլուն, մազերը դեղնած, հագուստը բարակ կտաւից և քրտնած, մօտ գնացի և հարցրի, ո՞վ ես. պատասխանեց. ,, ես եմ Ամառն իշխանի զօրապետը և անունս է Յունիս, այս անուան վրայ փոքր ինչ սկսայ մտածել, տեսնելով զօրապետը՝ որ աչքերս քաշ

գցած մօքիս հետ եմ, սկսաւ խօսիլ այսպէս ,, ես եմ սրտերի հայրնողը. իմ ժամանակումն են հնձում արտերը և սկսում են կալսել, պտղոց մեծ մասը կսկսէ հասնել, այգիքը ջրելու է, ապրեշումի խոզակները հաւաքելու է, ծղրաձանձերին ղունդ ղունդ ուրիշ ուրիշ փեթակների մէջ բաժանելու է: Հովիւը պիտի լաւ նայի, որ ոչխարները հով տեղերում արածեն, և հով օրերումը հանեն արածելու, և շատ լաւ կ'լինի, թէ որ չվարած արտի մէջ թողուն նրանց գիշերով, որովհետև իմ գիշերները չոր ու պայծառ լինելով՝ չեն վնաս տալ կենդանեացն. թող՝ որ այն արտերի մէջ լաւ խոտ կը գտնեն ուտելու, և նրանց աղբն էլ կը պարարտացնէ արտերն: Եթէ կամենաս իմ անուան ստուգաբանութիւնն իմանալ, իմ անունս երկու նշանակութիւն ունի, առաջինն է՝ ՅՈՒ-ՆԻՍ, այսինքն ունիս չունիս տարվայ պտղաբերութիւնդ աւ. որ ասված չ՛մնայ, երկրորդն՝ եթէ տասերս յետու առաջ դնես կը գտնես Յետուն, այսինքն կալսելու օրից յետոյ որ էլ կայ, որ կարող ես քո տարեկան պտղաբութիւնդ տեսնել, իսկ եթէ ինձ չես հաւատում, հարցրու երկրորդ ծերավերին, նա քեզ կասէ, այս ասելով էլ չքանեցաւ.

Մինչ ես զարմանում էի այս հրաշքների տեսիլքների վրայ, յանկարծ տեսայ կալերի միւս գլխին կանգնած մէկ աշխեղ կերպարանքով մարդ երեսի գոյնը կարմիր ու սև, աչքերէցը կրակ էր թափում, ամէն մէկ մազերը կրակէ պեծեր էին դուրս գալի, մարմնոյ կաշին արևի սաքութիւնն այնպէս էր այրել, որ կարծրացել էր, մէկ բազուկ աղօրի գլխին փաթթած, մէկ փայտ էլ ձեռքին ծնոտի տակը դրած՝ կանգնել էր. առաջի տեսնելու վախեցայ շատ. յետոյ սիրտ առայ տեսնելով շալակին

գալի, ցորեն, և տեսակ տեսակ ծառապտուղներ, քիչ միրգ տալ, մօտ գնացի, հարցրի „ո՞վ ես և ի՞նչ է անունդ, բայց փոշիմանեցայ հարցնելս, որովհետև այնպէս զռռաց, որ սար ու ձոր ձայնից դղրդաց, իմ դողս էլ բռնեց, որ մեկից վախեցած, հիմիկ սրան պատահեցայ, պատասխանեց, „ես եմ Ամառն իշխանի երկրորդ զօրապետը, և անունս է Յուլիս„, այս վերջին բառը լսելով այնպէս հասկացայ թէ ինձ է ասում Յուլիս, պատասխան տուի թէ ես ծոյլ չեմ, „Չէ չէ„, կրկնեց նա, անունս է Յուլիս, և այս անունն գիտութեամբ են դրել, որ դուք ամենքդ ծոյլ էք, ծուլանում էք ձեր տարեկան սնունդն պատրաստելու, վասն որոյ ես ձայն եմ տալիս թէ յուլիս, այսինքն ծուլանում ես, բայց ձեր ականջն խուլ է, չէք լսում։ Ահա ես եմ Հռոմայ կայսրը, թէ ինչքան երկար ապրեցի և եղէ կայսր Հռոմայ, բայց գիտե՞ս եղբայր, ես իմ ծուլութեամբս, իմ դանդաղութեամբս, իմ զօրութեանս և անհոգութեանս ապաւինելով՝ իմ կենաց համար հոգս չէի անում, վասն որոյ և ծերակուտից ժողովքի մէջ սպանվեցայ, ուստի այս ամսին տուին ինձ, որ դու չծուլանաս, քո պատրաստութիւնդ տեսնես, որ ձմեռան ծերակոյտներն շուտ կսկսին հաւաքել և քեզ կապանեն առանց ապրուստի։

Իմ ժամանակս արևի տաքութիւնն սաստիկ է, և ցամաքութեան վախ կայ, ուստի զարմանացան արտերը պէտք է լաւ ջրես։ Յորենը կալսելից և քամու տալուց յետոյ պէտք զգուշանաս, որ կալի վերայ լաւ չորանայ, որ ամբարի կամ հորի մէջը ոչխակեր չը լինի։ Անասուններին համար խոտը հնձելու է։ Կտրած ձիմերուն ժամանակ ժամանակ ջրի մէջ լողացնելու է։ Այս ամսով քամու պէս գնաց այն հսկայ մարդը։

Ես իմ Ճանապարհս շարունակելէն դէպ 'ի տուն. և ահա պատահեցաւ ինձ մէկ մարդ ահեղ տեսիլքով, վերէն շալակած ցորեան, լօբի, բակլայ, սիսեռ, խաղող, սեխ, ձմերուկ և ուրիշ զանազան տեսակ պաշարներ և մրգեղէնք, և ամէնքն ալ կանաչի մէջ, ստոյգ էր այն մարդը, քրտինքը հեղեղի պէս Թափումէին երեսիցը, շատ տկար հալ ունէր, շնիկ տաղն ալ դուրս էր ելել. Հարցի անունը, պատասխանեց, իմ անունս է Օգոստոս և Թագաւորական տոհմից եմ, բայց եԹէ տարադարձուԹեան անես, ամսուոց մէջ և ը. տառն ալ վեր առնես, կենայ Աւգ գօ. և Ճշմարիտն այս է, որովհետև ինձմէնից յետոյ, էլ չի լինի պտուղատու ծառերին, այլ կգայ այնպէսի եղանակ, որ ժամանակը մը կանաչին տերևներն Թափել և գօսանալ ծառերին իւրեանց Ճիւղերով, կորցնելով բոլոր վայելչուԹիւնը, որպէս Թէ չեն ունեցել և կը կորցնեն մարդոյ վայելուչ տեսիլը, իմ գործս է հասցընել պտուղներին, եԹէ խակ մնացած կան և օգնել մարդուն, որ քանի ցուրտը չէ եկել, ժողովէ ամենայն պարունը, Թէ ցորեան, Թէ դարի Թէ մրգեղէն, և լցնէ ամբարներումը. ըստ որում մեզանից յետոյ եկող իշխանը սովոր է ձիւն տալել, ուրիշ վաստակը մանել, իրան ժամանակին էլ եԹէ մնացած բան լինի, ու շուտով չհասցնի, ցրտատար անել, բոլորը փչացնել, ահա այս է, որ ես ձայն եմ տալիս Աւգ գօ., խնամ եմ անում, Թէ շուտ արէք ժողովեցէք, որ ծառերը կ՚գօսանան. ըստ որում ես որ լինում Օգոստոսն կայսր էի, և երկու մասանց աշխարհի հրամայող, չկատաշայտ իմ անուան խորատեղս, և գօտցայ ու մնայի անժառանգ, Թէպէտ որդեգիր ունէի, բայց ի՞նչ օգուտ, որովհետև առած է, հայր հորէն, որդին մորէն.

Իմ ժամանակս, քաթանի սերմը քաղել կամենաս, պիտի Թողուս որ հասնի ու չորանայ, իսկ եԹէ Թելերը կամենաս քաղել կտաւի համար, էն ժամանակը պէտք է սերմինները դեղնի, սկսելուն պէս հնձես. ԵԹէ որ կ'կամենաս Թելերի շատ բարակ լինելը, պէտք է ծաղիկ տալէն տասնեհինգ օր յետոյ կտրես. Երբ որ օդն կամանից կամանից կը սկսի հովանալ, պէտք է փողի աւելորդ տերեւներն քաղել, որ խաղողն լաւ հասնի, կապարի ծաղիկները առաւօտը վաղ հաւաքել, յետոյ ծածքի տակ չորացնել, ու բարակ աղով աղելէն յետոյ նորէն չորացնել, ու Թէժ զօրաւոր քացախով բղուղի մէջ ԹԹու դնել:

Այս խօսելէն յետոյ սա էլ միւսերի պէս Թաւ, գնաց ու էլ չերեւեցաւ.

Ես մնացի սառած, փետացած կանգնած, միտք եմ անում ինձ ու ինձ, Թէ այս ի՞նչ նախատինք եմ լըսում, այս ի՞նչ անարգանք են լցվում ականջներիս մէջ, այս ի՞նչ կծու կծու խօսքեր են, քիչ էր մնում, որ Թուլանամ, բայց սիրտս պնդեցի, ուշք ու միտքս հաւաքեցի, և սկսայ միտք անել, կշռել նրանց ասած խօսքերը, որ քիչը կպատահէր, չէ Թէ մարդուն, և ահա յանկարծ կշռելուս ժամանակն, պակաս գտայ մարդուն. գտակս վեր առայ գլխէս և դրի առաջէս, որպէս Թէ այն իմ տեսած մարդկանց հետ ուզում եմ դատաստան մըտնել, սակայն ճշմարտուԹեամբ դատեցի, և մարդս սուս երեւեցաւ նրանց առաջեւը, մեր մեղքն, ծուլուԹիւնն և մեր տտուԹիւնն այս էր՝ որ իմ երեսիս տուաւ մէկ մարդ, որ այն րոպէին այս իմ առանձին խօսակցուԹեան ժամանակին հիւսիսի մեշէրքից եկաւ հով և շաղ անձրեւ հետը բերելով, բայց ինքն դատարկ, սակայն ուրախ էր և ծի-

ծաղր նկարուած էր դէմքի վրայ, հագած ունէր այս ա-ռաջին տեսնելուս ժամանակին կանաչ շոր գլխիցն մինչև ոտները, և սկսաւ խօսել ինձ հետ այսպէս, « թէ ով մարդ ի՞նչի ես մտածմանց մէջ ընկել, ի՞նչն է դէմքդ դեղնել, մի՞ գուցէ ինձանից առաջ եկածներէ խօսած բաների վրայ ես նեղանում ու միտք անում, տեսնում եմ քո միտքդ նաւի պէս ծովի ալեաց վրայ ալէկոծեալ. ինչ որ ասել են այն զօրապետները շատ ճշմարիտ են ասել: Ահա ես երեսիդ մէկ մէկ ասեմ, և դու լաւ ա-կանջ դիր, թէ կամենաս արա, թէ չէ դու գիտես:

,, Քանի՞ տարեկան ես ,, հարցրուց այդ զօրապե-տը, պատասխան տուի քառասուն և երկու ,, ընտա-նիք ունի՞ս ,, ասացի ունիմ. ,, Հիմիկ տես թէ ի՞նչ խայտառակութիւն է անում գլխիս, որ անձրևը չի կա-րող սրբել: Բայց ո՞վ մարդ չէ թէ միայն քեզ եմ ա-սում, այլ բոլոր աշխարհքին, Աստուած ձեզ ստեղծեց բանական, աշխարհքն տուաւ ձեզ գործելու և պահելու, բայց տեսնենք, թէ ո՞ւր է ձեր կատարեալ բանականու-թիւնն, ի՞նչ տեղ է մնում ձեր աշխատանքն, երբ որ շատերդ քաղցած էք և ձեր տարեկան ապրուստն չէք պա-հում, որ ձմեռվայ ժամանակն նեղութիւն չի քաշէք, մրջիւնը ձեզանից խելօք է, որ ամառվայ ժամանակն ինչքան իւր ուժը պատում է, սկսում է հաւաքել իւր ձը-մեռվան պաշարը, բայց դուք անհոգութեան մէջ էք ընկ-նում, և ամենևին չէք միտք անում, թէ ձմեռ կայ գալու:

Աստուծոյ ամենայն բարութենով աշխարհս լիքն է, տեսնենք թէ ձեզանից, ո՞վ է տարվայ ապրուստը, որ գլխաւորն հացն է, առնում և պահում, որ երեխայքն սոված չմնան, Հարուստներն թողնելով ճոխի առուտու-

րըն, սկսում են հայ տանել Յունիսին, Յուլիսին և Օգոստոսին. և իմ ժամանակին, ու ամբարներն լցնելով. պահում են, թէ ի՞նչ է՝ Թանգանայ հացը, որ մեծ փատակով ծախեն. Իսկ արհեստաւորներն և մշակներն ասում են, թէ օր կվաստակենք օր կուտենք, ի՞նչ անենք փող չունենք, որ տարեկան հացն առնենք ու պահենք. Սուտ են, սուտ են, շատ սուտ են խօսում, տես ահա այդէքը. քանի քանի՞ արհեստաւոր և մշակ մարդիկ կան, որ խմում են, հարուստը շաբաթվայ մէջ մէկ Թունգի գինի ծախք չունի, իսկ ռհալթ մարդը օրն է խըմում մէկ Թունգի, դրան ի՞նչ փատակ կը դիմանայ, ի՞նչ փող հերիք կը լինի, ՚ի հարկէ անհաց կը մնայ, և դունէ դուռն աղքատութիւն կանէ, գինուց համար փող ունի, հացի համար փող չունի, մէկ լաւ մտածեցէք՝ թէ որն է հարկաւոր՝ գինի՞ն թէ հացը, առանց գինու կը դիմացվի, առանց հացի ոչ մի ժամանակ.

Ահա իմ իշխանութեան ժամանակին է, կը տեսնես շուտով, որ ամէն մէկը վրա պրծած խեղճ խաղողի վըրայ, որն դանակով, որն ձեռքով կտրեն քաղել, ու հընձանի մէջ ածել, որ գինի հանեն, կարասներն լցնեն, ու նստեն կարասների մօտ, մէկլին երկու գին տալով խմեն. Հա՛ գինուց համար փող կայ, իսկ հացի համար չկա՞յ, մէկ Թէքայ հացի վրայ հինգ Թունգի են խմում, իրանց փատակն նրան են տալիս, ու ասում են թէ չունենք, սուտ է, սուտ է, ունին, բայց խելք չունին կառավարութեան մասին.

Շատերին էլ մտիկ տուր, և կ՚ճանաչես էլ, որ տանը հաց չունեն ուտելու, բայց առաւօտ ու երեկոյ չայ են խմում, ի՞նչ է՝ մեծ մարդիկը գործ են ածում, այնպէս են կարծում այդ անխելքերդ, թէ ամէն օր չայ

խմելով իրանք էլ մեծ մարդու շարքը կընկնին. ա՜յ ողորմելի, մեծամեծներն մեկ բաժակ չայ խմելով մինչ 'ի ձայն ոչինչ չեն ուտում, խակ դու որ օրական վաստակի ես մուխկ տալի, թէ ինչ է տանդ կարողանաս պահել, փողըն էլ աւելցրել ես, և առում ես յետոյ՝ թէ կարօղութիւն չունիմ, որ երեխանցս ցամաք հաց տամ: Միտք ածա՛ թէ հիմիկուան ժամանակին ո՛ւմ բնատներն են լաւ հագուստով դուրս գալի, հարուստներինը, թէ ցածր մարդկերանցը, ես կասեմ որ արհեստաւորներինը, եթէ չես հաւատում, աչա գալիս են մեկ քանի կանայք, լաւ տես, մե՛կը փինաչու կնիկ, մե՛կը փալանդուզի, մե՛կը մանգաղի, մե՛կը թալլուզչու, մե՛ռ գնա և տես նրանց շորերը, որ լաւ ազնուակ և մախմուրի ձեթերից են, բայց տա՛նը հաց չունին, դրանք էլ տոխպում են իրանց մարդկերանցը որ լաւ ձեթեր առնեն, ըստ որում մեծամեծ և հարուստ մարդկանց կանայքը հագնում են, 'ի հարկէ տարեկան ապրուստ չեն կարող ունենալ, որովհետև լհէքի գեօրայ տանիրն չեն ձգում:

Կարծեմ թէ այս ասածներից դու շատ ես նեղանում, որովհետև կարմրում ես և քրտինքը կոխել է քեզ: Մ՛ի նեղանար, լսի՛ր աւելի մեծը, որ շատ հարկաւոր ապրուստի կարօղն է: Դու՛ք միշտ այսօրվան էք մտածում, այլ թէ վաղն ինչ կլինի, ամենեին մտածել չունիք, եթէ մեկ մարդ ձեզանից մեկ քանի շահէ փող ունենայ շուտով ամբարտաւանութեան դէն մըտնում է նրա և նրա կնոջ սրտի մէջը, ասելով թէ իմ ազգիս թող ինձանից բարձր տեղ տամ, ես ինչպէս լինի կապրիմ, և աչա ունեցած չունեցածն տալիս է, ուրիշներից էլ պարտք է վեր առնում, և իւր ազգին մեծ մարդու է տալիս, այնպէսքն իրանից բարձր ազգի որդուն,

մեկ տարուց յետոյ պարտատէրներն ծախել են տալիս ինչ որ՝ ունի, և ողորմելին մնում է աղքատ ու թշուառական, որովհետև փող չունի որ առուտուր անէ, վասն որոյ տարեկան ապրուստից զրկվում է. ընտանիքն մնում են սոված: Շատերն էլ աղքատ մարդոյ որդիք, որ հինգ գրօշի տէր չեն, հարսանիքի ժամանակն պարտք են վեր առնում ու հարսանիք անում, և տես թէ ինչ է լինում, հաց ու կերակուրն փչանում է, ուտող չկայ, այլ գինի են խմում, եթէ մէկն չէ կամենում խմել կամ բռնութենով են խմացնում, կամ գլխին են ածում, ինչ հարկաւորն է, գինին երանը չէ, տան տիրոջն էլ մեծը չէ, և այսպէս հարբում են, փչանում են, ու անբանի հետ հաւասարվում, պարտատէրն ժամանակին գալիս է փողն ուզելու, բայց ուստի է փողն, որ տայ, բաց են անում նորահարսի սնդուկը, հանում են շորերն և մատանիքներն, որը գրաւ են դնում, որը ծախում, ու պարտքն են տալիս, ուրեմն ինչ անեղանց կարօղ է իր տարեկան ապրուստը պատրաստել, կնիկը ծնում է, տունը կաթում է, ձիւնը դուռը բռնել է, ջուալումը ալիւր չկայ, տանը փայտ ու անձող, քուակումն էլ փող, ձեռներն կցել է, դէս ու դէն է ընկնում, ոչ ոք էլ փող չի տալի, նոր է խելանում իր սխալմունքը, բայց բանը բանից անց է կացել. և սկսում են ասել, թէ դնամ այսպիսի տարին՝ էլ յետ չգայ, տարին ինչ անէ, երբ դու անխելք ես, և ձեռն ու ձմեռն ամենեքին չես միտք ածում, այլ ասա՝ թէ գնամ իմ այսպիսի անխելքութիւնս և յետ չգայ, և նրա փոխանակ խելք տայ, որ փողն գինու չտամ և սոված չմնամ, որ ուրիշ ընկերիս չափովն գեօրայ ձգեմ ու աղքատ չմնամ.

Շատ բան կայ ասելու, բայց որ մէկն ասեմ,

տալիք է հարկաւոր խօսելու, իսկ իմ ժամանակս մօտ է կենդում, և միայն այս է իմ վերջին խօսքս՝ որ մարդն ունայն տեղն է Աստուծոյ անշնորհակալ լինում իւր վիճակի համար, որովհետև իւր փառասիրութեան և աղքատութեան պատճառ ինքն է, և ոչ թէ Աստուած, բայց որում Աստուած տուել է քեզ շնորհք, հանճար, բանականութիւն, վասն որոյ օրինաւոր գործ ածիր և քեզ օրինաւոր կառավարէ։

Այս խօսքերից այնպէս շուարեցայ, որ չկարացի հարցնել նրա անունն, և նա էլ շուտով հեռացաւ, և մըտաւ անտառի մէջ․ Ես ինչպէս քնից նոր զարթած, համարում էի թէ երազի մէջ եմ, և ամէն մէկ խօսքը սըրտիս մէջ տպաւորված լինելով՝ ձգեցի դատողութեան տակ և գտայ ամէնն էլ ճշմարիտ, բայց առի քսակս, տեսայ որ փող կայ մէջն, շատ փառքեցայ գեղն, առայ տարեկան ուտելիք թէ հաց թէ կերակուր, թէ մրգեղէն և թէ կանաչեղէն, նմանապէս ցախ ու փայտ վառելու, և ուղարկեցի սայլերով իմ տուն յանձնելով մէկ ծանօթ մարդոյ, իսկ ես կամաց կամաց գնում եմ և յանկարծ հիւսիսային կողմից սկսաւ փչել քամին և մէկ ճաղարոյ միրուքաւոր մարդ՝ հագուստը կարմրացած խազալի արիւնով, ցորենի շեղջի վրայ նստած էր։ Մազերն բարակ էին թուխ և չէկ, և սկսան թափիլ․ Շարժում էր ծառերին ու տերևները դեղնած թափվում էին․ փող էր փչում և որսորդներին հրաւիրում էր որսի։ Հրացաններն շատ տեղերից տրաքվում էին անտառների, ձորերի և դաշտերի մէջ։ Պախրէքը, կխտարները, վայրի այծը, ոչխարը արիւնաթաթախ փախչում էին և փռվում գետնի երեսին․ կաքաւները, լորերը, մէրահաւերը արիւնաթաթաւելի մէջն են թաթաւում ու վեր ընկնում գետնի վրայ։

Առաջին անգամը լսելով այս տրտունջների ձայնե-րը սիրտս ահ ընկաւ, բայց փոքր ինչ սիրտ առայ և գը-նացի մօտ հարցրի անունը․ պատասխանեց, թէ իմ ա-նունս է Աշուն, և եմ իշխան ամենայն պտղաբերու-թեանց, և աշխարհի ամենայն կերակուրն իմ իշխա-նութեան ժամանակն կարող է լինի գտնել մարդ, եթէ տառադարձես իմ անունս կը գտնես զանազան անուններ 1․ Անուշ, որովհետև թէ ուտելիքի և թէ խմելիքի ա-նուշութիւնն քանի որ ես իշխում եմ կարող ես տեսնել, ոչ տաք եմ ոչ ցուրտ, այլ միջակ։ 2 Նաուշ, այսինքն ձմեռն ուշ է գալու․ դեռ երեք ամիս ժամանակ ունիս․ ա՛ռ ձմեռվայ ապրուստդ և լցրու ամբարներդ։

Այս խօսքը դեռ չլրացած յանկարծ լսեցի մէկ խռովութեան ձայն, Ամառան իշխանի զօրքը կանգնած լի-նելով ճանապարհների գլխին՝ չէին թողնում որոնները մտնելոյ, բայց եկ կախուլը, Արեգակն՝ որ մեծ օգնական էր Ամառան, փոքր ինչ զօրութիւնը պակասեցուց, օրե-րը կարճացան, սար ու ձոր դղրդաց, թռչունները սկ-սան բները մտնել, կռունկը ջոկով դէպ 'ի Բաղդատ էր փախչում, ծառերն երկնագոյն տերևաթափ եղան ու խո-նարհեցան նոր իշխանին։ Ամառն իշխանն տեսնելով այս գործքերը փախաւ պատերազմից և դեսպան ուղարկեց խաղա-ղութե գցելու համար, այս խօսքերով Աշուն իշխան 'ի սկզբանէ անտի սովոր ես ձրի ապրել նուիրէջ վառաւորելի մէջ ։ ամե-լուն և վայելելուն, ապահովութեանդ չափը անց կացաւ, այդ չափ պտուղներն ես եմ հասցրել արեգական ջերմու-թեան տակը, որ կրակի պէս այրում էր․ ես եմ գտնա-ցել, թէ ինչ է, ես վայելեմ, իսկ դու որ մէկ փոքր աշխատանք չունիս, եկել ես և անիրաւութեամբ տի-րում ես իմ կոչքին, իսկ քո անունը ժամ գում եթէ; ոչ

կայրեմ քեզ։ Ո՜վ անխղճմտանք, այդ պատուական ծա-ռերը, այդ դաշտ ու ձորերն որ մինչ 'ի հիմայ կանաչ եմ պահել, պէտք դու բոլորը թառամացնես և ավե-րացնես, ձեռքդ չէ վառատկել ոչինչ, աչքդ էլ չի' խնայել, աշխարհքը պէտք անապատ շինես։

Աշուն իշխանն ծիծաղեց և դեղամնին յետ ուղար-կեց ասելով, թէ գնա' տար քո իշխանին, որ եթէ փոքր ինչ երկարել էր իշխանութիւնդ, կարծեմ թէ բոլոր աշ-խարհը պէտք կրակ տայիր, և մեխք դարձնէիր, բաւական է քեզ Ովկիանոսի հարաւային կողմի էլած տեղերը, որ քո զօրութիւնդ առանց խղճմտանքի ներգործում ես, և մեղանից ոչ մէկը ոտք չէ կոխում այն կողմերումն։ Ես չգիտեմ, թէ դու ինչ մեկ մեծ բարերարութիւն ես ա-րել երկրին, որ այդչափ պարծենում ես, և կամենում յաւիտենական տէր լինել։ Գարուն իշխանի ժամանակին ամ պտուղներն, բանջարներն և ծաղիկներն երևեցան, իսկ քո ժամանակդ, ինչ նեղութիւն ասես որ չտայիր, զանազան տեսակ ցաւեր, հիւանդութիւնք, մահտարաժամ, արիւն-հեղութիւն, Ճանապարհներին վրայ մարդասպանութիւն և աւազակութիւն, յանկարծակի հեղեղներ, որ շատ պտուղ ոչնչացրին, այնչափ էլ սառակցրել քո անգթութիւ-նը, որ գետերը պաղեցան, աղբիւրների ակներն ցա-մաքեցան, ջաղացներն կանգնեցան, և մարդը ալիւր չու-նէր ուտելու։ Ես այժմ եկել եմ, որ մնացած պտուղ-ները չորացնես, ջրերն սառցնեմ, ջաղացներն բան գցեմ, օդն մաքրեմ, ախտն հալեցնեմ, ցաւն ու մահն վերջացնեմ և մարդուն անոյշ համ տամ ապրելու մա-սին, իսկ քո յիշատակդ չկորցնելու և քեզ հետ խաղա-ղութեամբ կենալու համար փոքր ինչ քո անուան մէջն փոփոխութիւն կանեմ այն պատճառաւ, որ դու էլ ա-

նիս, բայց իշխանութիւնն իմս լինի. Նմանապէս՝ որ ասում-են Նմաւն, տուները յետ ու առաջ կդնեմ և կշինեմ Մառան և ամենայն բարութիւնք կը լցնեմ Մառանու-մէջ, եթէ կը համաձայնիս շատ լաւ, իսկ թէ ոչ, պատ-րաստ եմ պատերազմելու։

Նմաւն իշխանն լսելով այս պատգամս, թէպէտ ստորութիւն էր համարում իրան մնալ Նշնան իշխա-նութեան տակը, բայց մէկ կողմից տեսնելով թէ իւր զօրքը ցաքուցրիւ են եղել, միւս կողմից էլ Նշուն իշ-խանն բոլոր բարութիւնք իրան է տալիս, անձնաքացեալ հնազանդեցաւ, և պատերազմն խաղաղութեամբ անց կա-ցաւ։

Նշուն իշխանն նստեցաւ հնձանների և ամբարների գլխին, աթոռն փողից էր շինուած, չորս կողմովը ամ-բիք, ոսկեր և ակձորներ նոր գինով լիքը գլորված, մեծ սեղան էր պատրաստուած առաջը զանազան տեսակ գի-նիքով, սպիտակ հացով, գէր գէր մսերով, փլաւով, խորովածով, վայրի թռչունքներից տեսակ տեսակ ձկնե-րով և ամէն մրգեղէնով լի։

Մարդիկ, կանայք, աղջկունք, երեխայք չորս կող-մովը նստած՝ ուտում էին, խմում. սազանդարները եր-գում, զուռնաչիքը փչում, ձայներն մարդոյ սիրտը ուրա-խացնում։ Զարմանք է որ տեսնում եմ, էլ համար չկայ, հէնց ամէնքն էլ երևում է, որ Նշնան իշխանին էին սպասում, ի՞նչ է՝ գինոյ, հացի, բրնձի, մսի և ու-րիշ տեսակ ուտելիքի առատութիւն է, գեղեցիկ ու հա-ճոյական համն հոտ են անում, գիշերն երկար լաւ ուրախութեան ժամանակն է, տէրտէրներն ու սիրացուէ-քըն առաջ ընկած սազանդարներն ու զուռնաչիքն ետե-ւէն, նորափեսայն ու նորահարսն, և հարսնեւորներն նրանց

քամակից նայելով գնում են, երեխանց ուրախութեան ա-ղաղակը օդը լցնում է, ամէն մէկի ձեռքին մէկ մոմ, մութ գիշերը ճրագի լուսով ցերեկ են շինում. փամ-փուշտները ամէն քուչից գցելով, օդը աստղերով են լցնում, ձեռաց երկինք շինելով: Աշուն իշխանին առաջ է գնում նորափեսին և նորահարսին բաժակը ձեռքին գի-նով լի, շնորհաւորում է նրանց ուրախութիւնն, նրանց նոր բաղդաւորութիւնն, նրանց միութիւնն, որ Աստուած սահմանեց վերջերորդ օրումն այս խորհուրդ: Հրաւիրակալքն գալիս են ընդ առաջ շնորհաւորել նոցա պսակին, ազգա-կանները համբուրում են փեսային և հարսին, նստեցը-նում են պատրաստած նրանց համար առանձին աթոռ-ների վրայ, խաչեղբայրն էլ խաչն ձեռին նստած նորափե-սայի կողքին: Նոր հանդէս, տունը լիքն բազմութեամբ թէ բարեկամաց, թէ հրաւիրեալ անձանց և թէ դրկից-ների, մոմերը վառած, կասես թէ արեգակն է ծագել այն տանն, ածում են սազը, փչում են զուռնէն, կա-նայք և աղջկունք պար են գալիս, տունը տաք, խաղա-լէն քրտնած, երեսները վառ է դարձել, և ամէն հան-դիսականաց աչքերը նրանց են մտիկ տալիս, աղաղակի ձայնը օձորքը ուզում է վեր քաշի, ծափծափի են տա-լիս ամէնքի երեսին ուրախութիւնն նկարուած է. ուրախու-թիւնը Արարչոյ անապատի մէջն է փախել ու կորել:

Ես էլ տեսնելով այս ուրախութիւնը, այս հան-դէսը, ասէլ որ սեղանատան դռները բաց էին, ինչ մորթ-ուզում էր մտնում էր, մայ ներս, ոչ ոք հարցնող չէր, նստող սեղան, Աստուծոյ ամէն բարութեամբ լի էր, վայելեցի շնորհակալ կացայ տան տիրոջէն, կամե-նում էի դուրս գալ, բայց չթողին բազմականքն, նըս-տեցայ, և ինչ տեսնեմ, զարհուրելի բան, չէ որ Ամառն

իշխանին Մուսանէ դարձել, ավերյալ հանել Նաշանիշխանեն իր մերձը, բայց յանկարծ գինւոյ մասանը, ամա յինչքան գինի են բերում, իմ սանա մեջ ամեն հնգեք էր, մէկին կառավարիչ կարգեցին, և բոլոր բազմութիւնն ահրանքը դարձան ու մնաւնն փոխեցին դրին տօլոբաշի, շատերն էլ Թամադայ էին ասում։ Նպրէ մեր տօլոբաշին, եռ այնպէս խմացայ, թէ որովհետև Թամադայ բառը չէր-քեզերէն ալա կը նշանակէ, այդպէս Թենալ պիտի կառա-վարէ, բայց ընդ հակառակն սեռայ, սխրա քէչ մեց պատահէր, երեսի գոյնը թառ, եր որ շէնքէն ալըւխը, կապայի կոճակները և զօտի՛ն յետ արաւ, շոքեց, եռ կոր-ծեցի թէ աղօթք է կամենում անել, բայց նա բոլոր բա-ժակները և գինիքը հաւաքեց իր մօտ, կարծէլ է ասել, թէ մէկ միլխանի Թանկայ էր, բերել տուաւ մէկ սի-նի, դարսեց աման երկու բաժակ, և սկսաւ խմել նորա-փեսայի նորահարսի, խաչեղբօր և ուրիշ իւր մօտիկանց կենացը, մօրը ամեն դարձաւ, աչքերը դարձեր աչքերի պէս փառեց. ընդոն կարմեցաւ, էլ ուրիշ չէր խօսում, հե-մէկ էսանեղ մէկ Թարգմանն էր հարկաւոր, որ պատառա-մէկ և խելօք Թամադի խօսքը իմանայր, ամեն գեա ինձ կարգը չհասած, նմանապէս և մէկ քանի մօտիկանց էլ, մեւս խմողներն էլ Թամադի օրն ընկան, Թամադէն գը-լուխն կախ գցեց, աչքերն խփեց, և յանկարծ ղալթեց, ձեռքերն բերներն քաշեց, առա մէկ տօլա գինի, սկսաւ մէկ կենաց էլ խմել, բայց չկարցայ թէ ում կենացն էր, մնացերն էլ խմեցին, որոնք 12 խմել էին. բաղդ-ս յաջողեց ինձ, ամէնքն էլ հարբեցան, ու մէկի գլխի խելք չկար, որը նստած էր քնում, որը պաօշներն ծըռ-մռտելով խաղ էր տալիս կեկտակր ձայնով, որը երկու ձեռներն աչանքին սոսա տալած կխածակի էր տալիս, որը

գլուխը պնում էր ընկերոջ գոգին, և ընկերը նրա գլխին իր գլուխը, երբեմն ալջ մէկ մէկու վրայ ընկած Թօլի-Թօլ էին ընկնում, որը փսխում էր, որը փոքր ինչ խելք ունէր տանում էր ընկերոջը, խմէ՛, եթէ չէր խմում ածում էր գլխին, ուր հարբած դուրս էր գնում, էլ յետ գալ չկար, վերջապէս սեղանը մնաց ինձ և իմ երեք ընկերոջս, որք իմ մօտ նստած էին։

Թէպէտ Ամառն իշխանն, որ մառան էր դարձել տուաւ իրան վրէժը Աշուն իշխանէն այս օրինակ հարբեցնելով նրա յուսացողներին, բայց ինձ ամենեւին լաւ չթուեցաւ, որ ինչուինչ արարածը իր աշխատած վազին ջրովը մարդոյ խելքն առնու և անբանի հետ հաւասարէ, որ ոչինչ բան չհասկանայ, բանական մարդն իր խելքն մինչ 'ի այն տեղ կորցնէ, որ գինին իրան վրայ տէր դառնայ, բանական մարդը այնտեղ գցէ իրան, որ փորը, գլուխի վրայ իշխանութիւն բանեցնէ, բանական մարդը այնչափ յիմարանայ, որ անբանի պէս խօսի գինւոյ զօրութեամբն, բանական մարդը այն տեղը ընկնի, որ գինւոյ ճորտ դառնայ, բանական մարդոյն որչափ ամօթ և նախատինք է, որ գինւոյ ձեռքով ոչ թէ օտար մանր տղայոց, այլ և իր որդւոց ծիծաղելի դառնայ։

Փառք Աստուծոյ ես և իմ երեք ընկերքս ազատեցանք այս ամօթից և մեր մարդկութիւնքը պահեցինք կատարեալ ամբողջութեան մէջ. հաւասար ուտելով և հաւասար խմելով, վերկացանք սեղանիցն թողնելով միւս մարդկանց իրար վրայ ընկած, իրար վրայ փսխելով, որը մէկը մէկու երեսին, որը՝ փսխածի մէջ բերանը կոխելով, մեք դուրս եկանք հարսանիքից առաւօտի ծէգին, շնորհակալութիւն տուի տան տիրոջը և քաշւեցայ դէպ 'ի տուն։

Տան գնալուս Ճանապարհին այգիք կային, անց կենալուս մէկ խրախուսութեան ձայն լսեցի, մօտ գնացի ձայն տուի, բաց արին դուռը, տեսայ որ դռան բացանողն մէկ առոյգ երիտասարդ մարդ էր, թշերն կարմիր, զուարթ, ծիծաղադէմ, երգ էր ասում, պար էր գալի, ծափ էր տալիս, դէմքի վրայ ծիծաղը նկարված էր, հրաւիրեց ինձ ներս գնացի ես էլ, տարաւ մէկ մեծ տան մէջ, ինչտեղ կարասները թաղված էին գինով լիքը. և մարդիկ էլ ակերումը ճաքալին դրած չափերով գինի էին հանում և ածում ակերում. օճորքիցը տանձ, խնձոր, սերկեւիլ, նուռն, խաղող կախուած, մէկ կողմն էլ չորացրած թութ, կեռաս (բալի) թութն, ծիրան, դեղձն, չամիչ, և այլն, տաց հրամմեցէք, հրամմեցէք, կերայ մրգեղէնից, բայց գինու համար ներողութիւն խնդրեցի, որովհետև այն հարանկերումն աչքս վախեցել էր, այս խօսելուս արեգակն էլ ծագեց լեռների վրայ և ծառերի գլխին.

Հարցրի անունը և պատասխանեց ժպտալով ,,իմ անունն է Հոկտեմբեր,, և եթէ տառերը փոխես, այն ժամանակն կասեմ ,,Հո Տէկ մ'բեր,, որ գինի տանես, բայց դու տես, որ Աստուած գինին տուել է մարդոյն չափաւոր գործ ածելոյ համար, և ուրախանալու, բայց մարդիկ ընդ հակառակն չափիցն աւելի են գործ ածում խմում են անասունի պէս, հարբում են և դառնում են անասուն, կորցնելով խելքը, միտքը, ուշքը և մարդկութիւնն, փախում են կերած խմածը, այս օրինակ որկրամոլութենից յառաջանում են զանազան մոլութիւնք, չարագործութիւնք և անօրէնութիւնք, կռիւ, ծեծ, շորերի պատառոտել, մարդասպանութիւն, գողութիւն, քողութիւն, Աստուածահայհոյութիւն և այլն: Իւ այսպէս Աստուածային տուրը պարգևը շինում են անթիւ

մեղաց պատճառ, և բարկացնում են Աստուծուն իրանց վրայ, որով ընկնում են Աստուծոյ արդար պատժի և պատուհասի ներքոյ։ Այս անելով յանկարծ աներևութացաւ այն մարդն, էլ չտեսայ.

Էս ճանապարհս սկսեցի դէպ 'ի տուն, որովհետև օրերը հեռան ու հետը ցրտում էին, երբ որ ընկայ բաց ճանապարհի վրայ, վեր կացաւ հիւսիսի կողմից սաստ քամին, փչում էր սարերի գլխից, ուզում էր սար ու ձոր պոկել տեղիցը, ծառերին ջարդջրդէ ու տակտահան անէ, և տեսայ այս քամու հետ գալիս էր մէկ ծերունի մարդ, սառույցի վերայ նստած, ձիւնը գլխին բլուր էր շինել, ձեռները բերանն էր տանում տաքացնելու, ճանաչեցի որան շուտով, որ Ձմեռն իշխանն էր, գիտէի որա արարողութիւնն, որ երկրի զարդը և վայելչութիւնը պէտք կորէր, ամենայն կենդանիք ծակերը մտան նրա ահիցն, ես էլ եկայ նրա հոտիցն, շտապեցայ, գնացի տուն, փակեցի դռները, թղթեցի պատուհանները, վառեցի կրակն, տաքացրի տունս, երեխայքս ժողովեցան կրակի չորս կողմը, և ուտելիքի, խմելիքի ու փայտի նեղութիւն չունէի, որովհետև պատրաստութիւնս իրան ժամանակին տեսել էի. վայելեցի Աստուծոյ տուած բարութիւնը, փառք տալով նրա սուրբ Անուանը, անց կացրի ձմեռն առանց մէկ բանի կարօտութեան և նեղութեան, հանգիստ և խաղաղ կեանք վայելելով իմ ընտանեաց հետ.

Մէկ օր գնացի փողոցն տեսնելու, թէ ձմռան համար ապրուստ չպատրաստողներն ինչ են անում, և տեսածիս վերայ այս տաղս ասացի։

Ձմեռն վատ է և սոսկալի,
Ճանապարհները լիքն են ցխով.
Բայց ինձ համար է հեշտալի,

Վէրն ունիմ տունս տղրուտով.
Ինչքան կուզեն թող թանգ ծախեն
Ամենևին ես հոգ չունիմ.
Իմ վաղօրօք պատրաստածս
Հիմիկ նստած հանգարտ կուտեմ.
Փողոցումն ալիւր չկայ,
Ձիւնն էլ ճամփէքն բռնել է.
Գեղացին իւր տանը նստած,
Ալիւր բերող ոչ ոք չկայ.
Ալիւր ծախողն ուրախացաւ,
Ցուրտ ու ձիւնն երբ սաստկացաւ.
Անհաց մարդն պարկ շալակին
Դուքանի դռանը կանգնեցաւ.
Մէկին երկու գին է տալի,
Հետն էլ երկու աչքով լալի.
Մէկ շաբաթվայ ապրուստն առաւ,
Ըռված սրտով այս բանս ասաւ.
Չգիտեմ աղքատ մարդն ինչ կանէ
Այս շատ սաստիկ ձմռան միջի.
Տանը հոգի տասն նստած.
Յամէնք հացի են կարօտած.
Ալաւին ասաց ով եղբայր ջան
Ես ինչ անեմ դու ես անբան.
Չմտաք ածեր յամռան, յաշնան,
Որ պատրաստես պաշար քոյ տան,
Ձիւնը չորս կողմը բռնել է.
Իմ բաղդս արդ լաւ բացվել է.
Ցորեն, գարին, հաճար, բրինձ
Մէկին երեք վաստակում է.
Աղքատէլին կարմրատակած

Յօդւոց հանեց ու ախ քաշեց.
Անխելքու թեւանն իւր նոր դզւաց,
Ալեւ պարկը շալկեց գնաց.
Մարդ էլ տեսայ, որ փայտ չունէր,
Սայլապանի հետ խօսում էր.
Փայտ առնելուն շտապում էր,
Շուտ շուտ գինը ցածացնում էր.
Սայլապանը ինչպէս իշխան,
Կամ ջերմունը լէքը դրամ.
Ինչպէս հարուստ մարդ կանգնել էր
Երկու ձեռքը ետև դրած.
Գիւղին մարդիքը կիտւած են,
Ինչպէս ճորտեր մօտ իշխանին.
Իշխանք, ազնիւք, հարուստք, ռամիկք
Հարցանում են գինը փայտին.
Սայլապանը հպարտ կանգնած
Երկու ձեռքը կողքին դրած
Եօթն մանէթ է գին արած.
Խօսքի վրայ հաստատ մնացած.
Գոռգոռալով է էլ խօսում
Կասես ապրանքն է ապրուշում,
Միայն պարոն բառն է առում.
Ու իր դրած գինն է ուզում.
Ջա՛ն սայլապան, ջա՛ն սայլապան,
Այ մեր գլխին, ա՛խ սայլապան,
Տեղն էս գցել ա՛մ սայլապան
Ձիւն ու ձմռան ջան սայլապան։
Գինըդ ուզէ՛ մի՛ վախենայ,
Ինձ էլ ուզես տուող շատ կայ.
Քանի մեծատնից ձեռքէն խլեն,

Միշտ քո բանդ յառաջ կերթայ ։
Ամառան մէջ շատ վայր բերէր
Ալա մարդիկ տաւող չկար ,
Օրն տաք էր, ձմեռն չէր ։
Փայտ պատրաստող շատ քիչ մարդ կար ։
Հարուստները, գինուդ կան ,
Քամկումը շատ փողեր կան
Աղքատ մարդոյ տանն է քանդուել ,
Ու ջերմուկը մինչեւ խաղուն ։
Տես դու հիմիկ անձրեւորքին
Ցրեան ու՝ փայտն ձեռքին
Էշն անհաւով կոյ փողոցին ,
Երկու մանկթ գին կարեցին ։
Հարուստն եկաւ առաւ գնաց ,
Միջուկ մարդն էլ տաւու գնաց .
Խեղճն մնում է էժանանալու
Ցրտէ ձեռքէն ջանն գնաց ։
Շատ աժանն էր ութն ապասի .
Երբ աժանն էր չորս ապասի .
Ութ չէ հինգ էլ ջեբին չկայ .
Հակերին տաւու չորս ապասի ։
Ամէն բանի գին կայր կորած ,
Գնի թուղթն էլ պատին կպած .
Պաշտօնատէրն իւր ուզածին
Գին էր դնում ամէն բանին .
Ողջ ձմեռն ես այս տեսայ .
Կորած գնով բան չտեսայ .
Մէկ հարցնող ոչ ոք չկայր .
Ամէնքն իրանց կամքին տեսայ ։
Եթէ մէկն պախարակում էր ,

Միւսն ջկյաւ աւելցնում էր.
Ծախողն էլ շատ խնդում էր
Այս անխելք քամին երբ ուռնում էր :
Ալան բաղկով հարստացին ,
Քաղաք գիւղեր շատ ձեռք բերին .
Ամէն տեղ մարդ նստած ունին,
Տեղն ու տեղն միշտ տանում են :
Ալէր նեղու, ուղափլինն է .
Բրինձ . գարին ուղափլինն է .
Փողոցումն էլ թէ քան մնայ
Ճաշէն յետոյ ուղափլինն է :
Չէթն ու ոսկն էլ բաղկովլինն է ,
Աղպատասյուն բաղկովլինն է .
Եղ ու պանիրն էլ խօսք չկայ ,
Ճաշէն յետոյ թէ մնում է :
Այ մարդ խելքդ գլուխդ հաւաքիր ,
Տարուայ պաշարդ վաղ պատրաստիր՝
Ծուռ կշռքի տակ մի՛ ընկնի ,
Թէ չէ քանդ կըցամաքընի :
Պատի թղթին մեխկ մի՛ տար .
Կտրած գնին դու մի՛ յուսար .
Մէկկին երկու գինն կառնեն ,
Թէ և գնօղքն շատ խեղճ լինին :
Յուրան զօրեց գնացի տուն .
Նստայ, տուի փառք Աստուծուն .
Ջոցս , բրինձս , փայտս շատ էր .
Բարութենով տունս լիքն էր :



ՀՀ Ազգային գրադարան
NL0339563